

1408

Պրոֆ. Մարտիրոս Բուրժուազյանի, միացնող,



Մարտիրոս (Լևոն)

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3K23

μ-84

ՍՈՒՍՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ.

ՅԵՐԵՎԱՆ 1983.

25 MAY 2000

Պրովետարները բոլոր յերկրների, միացելը

40K

03 NOV 2000

OK 23

M-84

պ.

Վ. Բ. ԼԵՆԻՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԲՅՑ -
ԲԵ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1998

ՌՈՒՍՍՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Շնորհիվ ձեռք բերված հաջողության, չնայած նրա ամբողջ¹ ժանրությանն ու նրա ամբողջ անկայունությանը, Ռուսաստանի խորհրդային հանրապետությունը վերոջ ժամանակամիջոցում հնարավորություն է ստանում իր ուժերը կենտրոնացնելու սոցիալիստական հեղափոխության կարևորագույն և դժվարագույն կողմի, այն է՝ կազմակերպական խնդրի վրա:

Այդ խնդիրը պարզ և վորոշ դրված է բոլոր աշխատավորների և ճնշված մասսաների առաջ Մոսկվայի խորհուրդների արտակարգ համագումարում 1918 թվի մարտի 16-ին ընդունված բանաձևի 4-րդ պարբերության մեջ (4-րդ մասում), բանաձևի այն նույն պարբերության մեջ (կամ նույն մասում), վորտեղ խոսվում է աշխատավորների ինքնակարգավորության և քառսի ու կազմալուծման դեմ անողոր պայքար մղելու մասին²:

Ռուսաստանի խորհրդային հանրապետության ձեռք բերած հաջողության անկայունությունն, իհարկե, պայմանավորված չէ նրանով, վոր նա այժմ խորհրդածի պատերազմական գործողությունները վերսկսելու մասին. բացի բուրժուական հակահեղափոխականներից և նրանց ձայնակցողներից (մենշևիկներից և ուրիշն.), վոչ մի խելահաս քաղաքագետ չի մտածում այդ մասին: Հաջողության անկայունությունը պայմանավորվում է նրանով, վոր արևմուտքից և արևելքից Ռուսաստանին սահմանա-

¹ „Известия“-յում «ամբողջ»-ը բաց է թողնված: Խմբ.:

² Տես Յերկերի XXII հատոր, էջ 530—532: Խմբ.:



4603
39

կից իմպերիալիստական պետություններում, վորոնք հակայա-
կան ռազմական ուժ ունեն, ըոպե առ ըոպե կարող ե գրու-
թյան տեր դառնալ պատերազմական կուսակցությունը՝ հրա-
պուրված Ռուսաստանի վայրկենական թուլությունից և գրգված
սոցիալիզմն ատող և կոդպուտի սիրահար կապիտալիստներին:

Իրերի այս գրության մեջ հաշտության ռեալ, վոչ թղթե,
յերաշխիք ե մեզ համար բացառապես իմպերիալիստական պե-
տությունների անմիաբանությունը, վորը հասել ե ամենաբարձր
չափերի և արտահայտվում ե մի կողմից՝ Արևմուտքի ժողովուրդ-
ների իմպերիալիստական սպանդի նորոգումով, իսկ մյուս կող-
մից՝ Ճապոնիայի և Ամերիկայի ծայրահեղորեն լարված իմպե-
րիալիստական մրցակցությամբ, վոր տեղի ունի Մեծ ովկիանո-
սի և նրա ափերի տիրապետության համար:

Հասկանալի յե, վոր մեր այսքան խախուտ պաշտպանու-
թյուն ունեցող Խորհրդային սոցիալիստական հանրապետությու-
նը գտնվում ե միջազգային չափազանց անկայուն, անպայման
կրիտիկական գրության մեջ: Անհրաժեշտ ե ծայրահեղ չափե-
րով լարել մեր բոլոր ուժերը, վորպեսզի ոգտագործենք հան-
գամանքների բերումով մեզ տրամադրված դադարը՝ բուժելու
համար այն ամենածանր վերքերը, վոր հասցրել ե պատերազ-
մը Ռուսաստանի ամբողջ հասարակական որգանիզմին, և յերկ-
րի անտեսական վերելքի համար, առանց վորի խոսք անգամ
չի կարող լինել պաշտպանունակության քիչ թե շատ լուրջ բարձ-
րացման մասին:

Նմանապես հասկանալի յե, վոր Արևմուտքում մի շարք պատ-
ճառներով ուշացած սոցիալիստական հեղափոխությանը մենք
լուրջ ոժանդակություն կարող ենք ցույց տալ միայն այն չա-
փով, վորչափ մենք կկարողանանք լուծել մեր առաջ դրված
կազմակերպական խնդիրը:

Առաջին հերթին մեր առաջ դրված կազմակերպական խնդ-
րի հաջող լուծման հիմնական պայմանն այն ե, վոր ժողովուր-

դի քաղաքական ղեկավարները, այն ե՝ Ռուսաստանի կոմունիս-
տական (բոլշևիկների) կուսակցության անդամները, ապա նաև
աշխատավոր մասսաների բոլոր գիտակից ներկայացուցիչները
լիովին յուրացնեն նախկին բուրժուական հեղափոխություննե-
րի և ներկայիս սոցիալիստական հեղափոխության միջև յեղած
արմատական տարբերությունը մեր քննած տեսակետից:

Բուրժուական հեղափոխությունների մեջ աշխատավոր մաս-
սաների զլխավոր խնդիրն ե՝ ֆեոդալիզմի, միապետության, միջ-
նադարայնության վոչնչացման բացասական կամ խորտակիչ աշ-
խատանքի կատարումը: Նոր հասարակության կազմակերպման
դրական կամ ստեղծագործական աշխատանքը կատարում եր
բնակչության ունևոր, բուրժուական փոքրամասնությունը: Յեվ
նա, հակառակ բանվորների և չքավոր գյուղացիների գիմադրու-
թյան, այդ խնդիրը համեմատաբար հեշտ եր կատարում վոչ
միայն այն պատճառով, վոր կապիտալի կողմից շահագործվող
մասսաների գիմադրությունն այն ժամանակ, նրանց բաժան-բա-
ժան լինելու և զարգացած չլինելու հետևանքով, չափազանց
թույլ եր, այլ և այն պատճառով, վոր անարխիկ կառուցված
կապիտալիստական հասարակության հիմնական կազմակերպիչ
ուժը ազգային և միջազգային, տարբերայնորեն, լայնությամբ
և խորությամբ աճող շուկան ե:

Ընդհակառակը՝ պրոլետարիատի և նրա ղեկավարած չքա-
վոր գյուղացիության զլխավոր խնդիրն ամեն մի սոցալիստա-
կան հեղափոխության մեջ, հետևաբար նաև Ռուսաստանում՝
մեր սկսած՝ 1917 թվի նոյեմբերի 7-ի (հոկտեմբերի 25-ի) սո-
ցիալիստական հեղափոխության մեջ, այն նոր կազմակերպական
հարաբերությունների չափազանց բարդ և նուրբ ցանցը կարգի
դնելու դրական կամ ստեղծագործական աշխատանքն ե, վորոնք
ընդգրկում են տասնյակ միլիոնավոր մարդկանց գոյության հա-
մար անհրաժեշտ միջոցների սլանաչափ արտադրությունն ու
բաշխումը: Այդպիսի հեղափոխություն հաջողությամբ կարող ե

իրականացվել միայն բնակչության մեծամասնության, նախ և առաջ, աշխատավորության մեծամասնության պատմական ինքնուրույն ստեղծագործության դեպքում: Սոցիալիստական հեղափոխության հաղթությունը կապահովվի միայն այն դեպքում, յետևյալ պայմաններին և չքավոր գյուղացիությունը կարողանան իրենց մեջ գտնել բավականաչափ գիտակցականություն, դադարաբանություն, անձնվիրություն, հաստատակամություն: Ստեղծելով պետություն նոր, խորհրդային տիպ, վորը աշխատավորների և ճնշված մասսաների համար հնարավորություն է բաց անում գործոն մասնակցություն ցույց տալու նոր հասարակության ինքնուրույն կառուցմանը, մենք լուծել ենք դժվարին խնդրի միայն մի փոքրիկ մասը: Գլխավոր դժվարությունը տնտեսական ասպարեզն է՝ իրականացնել մթերքների արտադրության և բաշխման խստագույն հաշվառումն ու վերահսկողությունն ամենուրեք, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, հանրայնացնել արտադրությունը գործնականում:

Բոլշևիկների կուսակցության, վորը ներկայումս կառավարական կուսակցություն է Ռուսաստանում, զարգացումը առանձին ակնառությամբ ցույց է տալիս, թե վորն է մեր ապրած և ներկա քաղաքական մոմենտի առանձնահատկությունը կազմող պատմական բեկումը, վոր պահանջում է Խորհրդային իշխանության նոր կողմնորոշում, այսինքն՝ նոր խնդիրների նոր դրույթ:

Յուրաքանչյուր կուսակցության ապագայի առաջին խնդիրն է համոզել ժողովրդի մեծամասնությանը նրա ծրագրի և տակտիկայի ճշտությունը: Այդ խնդիրն առաջին պլանի վրա յե գտնվել ինչպես ցարիզմի, այնպես և Չերնովների և Ծերեթելիների համաձայնողականության շրջանում հերենակու և Կիշկինի հետ: Այժմ այդ խնդիրը, վորն, իհարկե, դեռևս հեռու յե ավարտված լինելուց և վորը յերբեք չի կարող սպառվել մինչև վերջ, հիմնականում լուծված է, վորովհետև Ռուսաստանի բանվորների և գյուղացիների մեծամասնությունը, ինչպես ան-

վիճելի կերպով ցույց տվեց Խորհուրդների վերջին համագումարը Մոսկվայում, հայտնապես կողմնակից է բոլշևիկներին:

Մեր կուսակցության խնդիրը խնդիրն էր քաղաքական իշխանության նվաճումը և շահագործողների դիմադրության ճնշումը: Յեվ այդ խնդիրը բնավ չի սպառված վերջնականապես և նրան անկարելի յե անտեսել, վորովհետև մի կողմից միապետականներն ու կադեաները, մյուս կողմից՝ նրանց ձայնակցողներն ու արքայականները՝ մենշևիկներն ու աջ եսերները շարունակում են միացման փորձեր կատարել Խորհրդային իշխանությունը տապալելու համար: Սակայն շահագործողների դիմադրության ճնշման խնդիրը հիմնականում արդեն լուծված է 1917 թ. նոյեմբերի 7-ից (հոկտեմբերի 25-ից) մինչև (մոտավորապես) 1918 թ. փետրվար ընկած ժամանակամիջոցում կամ մինչև Բազայեվսկու անձնատուր լինելը:

Այժմ, իբրև մեր ապրած մոմենտի յուրահատկությունը կազմող հերթական խնդիր, առաջադրվում է Ռուսաստանի կառավարումը կազմակերպելու խնդիրը: Հասկանալի յե, վոր այդ խնդիրը մենք դրել և լուծել ենք 1917 թ. նոյեմբերի 7-ի (հոկտեմբերի 25-ի) յերկրորդ խիստ ուր, սակայն մինչև այժմ, քանի դեռ շահագործողների դիմադրությունը դեռևս ընդունում էր բացահայտ քաղաքացիական պատերազմի ձև, մինչև այժմ կառավարման խնդիրը չե կարող դառնալ գլխավոր, կենսոնական խնդիր:

Այժմ այդ խնդիրը դարձել է այդպիսին: Մենք՝ բոլշևիկների կուսակցությունը Ռուսաստանին համոզեցինք: Մենք Ռուսաստանը նվաճեցինք հարուստներից չքավորների համար, շահագործողներից աշխատավորության համար: Մենք այժմ պետք է Ռուսաստանը կառավարենք: Յեվ մեր ապրած մոմենտի ամբողջ յուրահատկությունը, ամբողջ դժվարությունն այն է, վոր հասկանանք ժողովրդին համոզելու և շահագործողներին ռազմական ճանապարհով ճնշելու գլխավոր խնդրից կառավարման գլխավոր խնդրին անցնելու առանձնահատկությունները:

Համաշխարհային պատմութեան մեջ առաջին անգամ սոցիալ-
լիստական կուսակցութիւնը կարողացել է գլխավոր դերերով ավար-
տել իշխանութեան նվաճման և շահագործողներին ճնշելու գործը,
կարողացել է ընդհուպ մոտենալ կառավարման հարցին: Պետք է,
վոր մենք լինենք սոցիալլիստական հեղաշրջման այդ ամենադժվա-
րին (և ամենաշնորհակալ) խնդրի արժանավոր կատարողները:
Պետք է մտածել յե՞վ հասկանալ, վոր հաջող կառավարման համար
բացի համոզել կարողանալուց, բացի քաղաքացիական պատե-
րագմում հաղթել կարողանալուց, անհրաժեշտ է գործնականա-
պէս կազմակերպելու կարողութիւն: Այդ ամենադժվարին
խնդիրն է, վորովհետեւ գործը վերաբերում է տասնյակ և տասնյակ
միլիոնավոր մարդկանց կյանքի ամենախոր, տնտեսական, հիմ-
քերը նոր ձևով կազմակերպելուն: Յե՞վ այդ ամենաշնորհակալ
խնդիրն է, վորովհետեւ միայն նրա լուծումից հետո (գլխավոր և
հիմնական գծերով) կարելի յէ ասել, վոր Ռուսաստանը դարձել
է վոչ միայն Խորհրդային, այլ և սոցիալլիստական հանրապե-
տութիւն:

ՄԱՍԵՆՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼՈՁՈՒՆԳՐ

Վերեւ գծված որչեկտիվ դրութիւնը, վոր ստեղծված է ծայ-
րահեղ ծանր և անկայուն հաշտութեան, ամենատաժանելի քայ-
քայման, գործադրկութեան և սովի հետևանքով, վոր մեզ ժառան-
գութիւնն է թողնված պատերազմից և բուրժուազիայի տիրապե-
տութիւնից (հանձին կերենսկու և նրան պաշտպանած մենշևիկ-
ների՝ աջ ես-երների հետ միասին), այդ բոլորն անխուսափելի-
րեն առաջացել է աշխատավորութեան լայն մասսաների ծայրա-
հեղ հոգնածութիւն և նույնիսկ ուժասպարտութիւն: Նա հրամա-
յաբար պահանջում է, և չի կարող չպահանջել, վորոշ հանգիստ:
Իբրեւ որվա հերթական հարց առաջադրվում է պատերազմի և
բուրժուազիայի տիրակալութեան հետևանքով քայքայված արտա-
դրողական ուժերի վերականգնում՝ պատերազմի, պատերազ-

մում կրած պարտութեան, սպեկուլյացիայի և շահագործողների
տապալված իշխանութիւնը վերականգնելու համար բուրժուա-
զիայի փորձերի պատճառած վերքերի բուժում, յերկրի տնտե-
սական վերելք, տարրական կարգ ու կանոնի հաստատուն պահ-
պանութիւն: Պարադոքս կարող է թվալ, սակայն իրականու-
թեան մեջ, մատնանշված որչեկտիվ պայմանների շնորհիվ, կատա-
րելապէս անկասկած է, վոր ներկա մոմենտին Խորհրդային իշ-
խանութիւնը կարող է ամրապնդել Ռուսաստանի անցումը սո-
ցիալիզմին միայն այն դեպքում, յետէ նա, հակառակ բուժուա-
զիայի, մենշևիկների և աջ ես-երների հակագործութեան, գործ-
նականապէս լուծի հասարակայնութեան պահպանման հատկապէս
այդ ամենատարրական և տարրականագույն խնդիրները: Այդ
տարրականագույն խնդիրների գործնական լուծումը և դեպի սո-
ցիալիզմ կատարվող առաջին քայլերի կազմակերպական դժվա-
րութիւնները հաղթահարումը ներկայումս տվյալ դրութեան կոնկ-
րետ առանձնահատկութիւնների հետևանքով և Խորհրդային
իշխանութեան և հողի սոցիալիզացիայի, բանվորական վերահս-
կողութեան մասին նրա որոշումների և այլն գոյութեան պայման-
ներում հանդիսանում է մեկ դրամի յերկու կողմը:

Իրամի հաշիվը պահիր կանոնավոր և բարեխիղճ, տնտե-
սավարիր խնայողաբար, գործափախ մի լինիր, մի գողանար, ամե-
նախիստ կարգապահութեան հետևիր աշխատանքի մեջ՝ ահա
այսպիսի լոգունները, վորոնց իրավացի կերպով ծաղրում եյին
հեղափոխական պրոլետարներն այն ժամանակ, յերբ բուրժուա-
զիան նման ճառերով թագցնում եր իր տիրապետութիւնն իբրեւ
շահագործողների դասակարգի, այժմ, բուրժուազիային տապալե-
լուց հետո դառնում են մոմենտի հերթական և գլխավոր լոգունգ-
ներ: Յե՞վ աշխատավորները մասսայի միջոցով այդ լոգունգների
նորակտիկ կենսագործումը կյանքում մի կողմից իմպերիալիստա-
կան պատերազմի և իմպերիալիստական գիշատիչների միջոցով
(կերենսկու գլխավորութեամբ) հոշոտված և կիսամահ արված

յերկրի փրկութեան միակ պայմանն է, իսկ մյուս կողմից՝ այդ լողունքների պրակտիկ կիրառումը կյանքում Խորհրդային իշխանութեան միջոցով, նրա մեթոդներով, նրա որոնքները հիման վրա՝ անհրաժեշտ և քաղաքար է հանդիսանում սոցիալիզմի վերջնական հաղթութեան համար։ Հենց այս է, վոր չեն կարողանում հասկանալ նրանք, ովքեր արհամարհանքով հրաժարվում են առաջին պլանի վրա դնելու այսօրվա «քաղաքացի» և «գոհակացած» լողունքներ։ Մանր-գյուղացիական մի յերկրում, վորը միայն մի տարի առաջ է տապալել ցարիզմը և ավելի պակաս, քան կես տարի սրանից առաջ ազատվել Կերենսկիներից, բնականաբար, քիչ տարերային անարխիզմ չի մնացել, վորն ուժեղացել է գազանացումով և վայրենացումով, վորոնք ուղեկցում են ամեն մի տեական և ռեակցիոն պատերազմի, հուսահատութեան և անառարկայական կատաղութեան քիչ տրամադրություն չի առաջացել։ Յեթե դրան ավելացնենք բուրժուազիայի լակեյների (մենշևիկների, աջ ես-երների և այլն) պրոփոկատորական քաղաքականությունը, ապա միանգամայն հասկանալի կլինի, թե լավագույն և ամենազիտակից բանվորների և գյուղացիների ինչպիսի տեսական և համառ ջանքեր են պետք մասսայի տրամադրությունների մեջ կատարյալ բեկում առաջացնելու և նրա կանոնավոր, տոկուն, կարգապահ աշխատանքի անցնելու համար։ Միայն այդպիսի մի անցում, վոր իրագործված է չքավորութեան (պրոլետարների և կիսապրոլետարների) կողմից, ընդունակ է ահա ավարտելու հաղթությունը բուրժուազիայի վրա և առանձնապես ամենահամառ և բազմաքանակ գյուղացիական բուրժուազիայի վրա։

ԿՈՎԻ ՆՈՐ ՖԱՋԸ ԲՈՒՐժՈՒԱԶԻԱՅԻ ԴԵՄ

✓ Մեզ մոտ բուրժուազիան պարտված է, սակայն նա դեռևս արմատախիլ չի արված, չի վոչնչացված և նույնիսկ վերջնականապես չի ջախջախված։ Այդ պատճառով իբրև որվա հերթական

հարց առաջադրվում է կովի մի նոր, բարձր ձև բուրժուազիայի դեմ՝ կապիտալիստներին հետագա եքսպրոպրիացիայի ամենապարզ խնդրից անցնել շատ ավելի բարդ և դժվարին խնդրի՝ ստեղծելու այնպիսի պայմաններ, վորոնց դեպքում չկարողանա վնչ գոյություն ունենալ բուրժուազիան և վնչ էլ նորից առաջանալ։ Պարզ է, վոր այս խնդիրն անհամեմատ ավելի բարձր է և վոր առանց նրա լուծման դեռևս սոցիալիզմ չկա։

Յեթե վերցնենք արևմտ-յեվրոպական հեղափոխությունների մասշտաբը, այժմ մենք մոտավորապես գտնվում ենք այն մակարդակի վրա, վոր նվաճված էր 1793 թվին և 1871 թվին։ Մենք որինական հիմք ունենք հպարտանալու, վոր բարձրացել ենք այդ մակարդակը և մի տեսակետից, անկասկած, մի քիչ ավելի առաջ ենք անցել, այն է՝ ամբողջ Ռուսաստանում դեկրետավորել և մտցրել ենք պետութեան գերագույն սիպր՝ Խորհրդային իշխանությունը։ Սակայն ձեռք բերածով մենք վոչ մի դեպքում չենք կարող բավարարվել, վորովհետև մենք միայնակսել ենք անցնել սոցիալիզմին, իսկ վճռականն այդ տեսակետից դեռևս չենք իրագործել։

Վճռականն է ամենախիստ և համաժողովրդական հաշվառման և վերահսկողութեան կազմակերպումը մթերքների արտադրութեան ու բաշխման նկատմամբ։ Մինչդեռ այն ձեռնարկություններում, տնտեսութեան այն ճյուղերում և կողմերում, վոր մենք խլել ենք բուրժուազիայից, հաշվառման ու վերահսկողութեան դեռևս մենք չենք հասել, իսկ առանց այդ բանի խոսք անգամ չի կարող լինել սոցիալիզմ մտցնելու յերկրորդ, նույնքան եյական, նյութական պայմանի, այսինքն՝ համաժողովրդական մասշտաբով աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու մասին։

Այս պատճառով ներկա մոմենտի խնդիրը չէր կարելի բնորոշել մի պարզ ֆորմուլայով, այն է՝ շարունակել հարձակումը կապիտալի դեմ։ Չնայած վոր մենք կապիտալն, անկասկած,

վերջնականապես չենք ջախջախել, և վոր աշխատավորների այդ թշնամու դեմ հարձակումը շարունակել անպայման անհրաժեշտ է, նման բնորոշումը կլինե՞ր անճիշտ, վոչ կոնկրետ, այն չեր կրի իր մեջ ամյալ մոմենտի յուրահասկության հաշվառումը, յերբ հետագա հարձակման հաջողության համար հարձակումը պետք է «դադարեցնել» այժմ:

Այս կարելի չե պարզաբանել, համեմատելով մեր դրությունը կապիտալի դեմ մղվող պատերազմում այն հաղթական զորքի դրության հետ, վորն, ասենք թե, թշնամուց զրավել է տերիտորիայի կեսը կամ յերկու յերրորդը և հարկադրված է դադարեցնելու հարձակումը, վորպեսզի ուժեր հավաքի, ավելացնի մարտական միջոցների պաշարները, նորոգի և ամրացնի կոմունիկացիոն զինքը, կառուցի նոր պահեստներ, կազմի նոր ռեզերվներ և այլն: Հաղթական զորքի հարձակման դադարեցումը նման պայմաններում անհրաժեշտ է հատկապես մնացած տերիտորիան թշնամուց զրավելու, այսինքն՝ լիակատար հաղթության շահերի տեսակետից: Ով չի հասկացել, վոր հատկապես այդ է ներկա մոմենտին իրերի որչեպիվ դրության թելադրած հարձակման «դադարեցումը» կապիտալի դեմ, նա վոչինչ չի հասկացել մեր ապրած քաղաքական մոմենտից:

Հասկանալի չե, վոր հարձակման «դադարեցման» մասին կապիտալի դեմ կարելի չե խոսել միայն չափերտների մեջ, այսինքն՝ այլաբանորեն: Սովորական պատերազմում կարելի չե ընդհանուր հրաման տալ հարձակումը դադարեցնելու մասին, կարելի չե զործնականում դադարեցնել առաջխաղացումը: Կապիտալի դեմ պատերազմելիս առաջխաղացումը չի կարելի դադարեցնել, և խոսք ահգամ լինել չի կարող այն մասին, վոր մենք հրաժարվենք կապիտալի հետագա եքսպրոպրիացիայից: Խոսքը վերաբերում է մեր տնտեսական և քաղաքական աշխատանքի ծանրության կենտրոնը փոխելուն: Մինչև այժմ առաջին պլանի վրա եյին դրված եքսպրոպրիատորների անմիջական եքս-

պրոպրիացիայի ձեռնարկումները: Այժմ առաջին պլանի վրա յե դրվում հաշվառման և վերահսկողության կազմակերպումն այն տնտեսություններում, վորտեղ արդեն եքսպրոպրիացիայի յեն յենթարկված կապիտալիստները, և մնացած բոլոր տնտեսություններում¹:

Յեթե մենք այժմ ուղենայինք նախկին տեմպով առաջիկայում նույնպես շարունակել կապիտալի եքսպրոպրիացիան, մենք, հավանաբար, պարտություն կկրեյինք, վորովհետև պրոետարական հաշվառման և վերահսկողության կազմակերպման մեր աշխատանքը բացահայտ, ակնբախ կերպով ամեն մի մտածող մարդու համար՝ հետ է մնացել անմիջականորեն «եքսպրոպրիատորներին եքսպրոպրիացիայի յենթարկելու» աշխատանքից: Յեթե մենք այժմ ամբողջ ուժով ծանրանանք հաշվառման և վերահսկողության կազմակերպման աշխատանքի վրա, մենք կկարողանանք լուծել այս խնդիրը, մենք կրացնենք այն, ինչ բաց լենք թողել, մենք կշահենք կապիտալի դեմ մղած մեր «կամ պանիան»:

Սակայն ընդունել, վոր հարկ կա լրացնելու բաց թողածը, արդյոք համազոր չե՞ ինչ-վոր կատարած սխալի խոստովանության: Ամենևին: Կրկին առաջ բերենք պատերազմական համեմատությունը: Յեթե թշնամուն կարելի չե ջարդել և վանել միայն թեթև հեծելազորի ջոկատներով, այդ պետք է անել: Իսկ յեթե այդ հաջողությամբ կարելի չե անել միայն մինչև մի վորոշ սահման, ապա միանգամայն հասկանալի չե, վոր այդ սահմանից այն կողմն անհրաժեշտություն է առաջանում մոտ քաշել ծանր հրետանին: Ընդունելով, վոր այժմ պետք է լրացնել ծանր հրետանու մոտեցման բացը, — մենք ամենևին սխալ չենք համարում հեծելազորային հաղթական զրոհը:

¹ Զեռագրում և «ИЗВЕСТИЯ»-յում բացակայում են «և մնացած բոլոր տնտեսություններում»: Խմբ.:

Բուրժուազիայի լակեյները մեզ հաճախ կշտամբել են, վոր մենք «կարմիր-գվարդիական» գրոհ ենք մղել կապիտալի դեմ: Այդ կշտամբանքն անհեթեթ է՝ արժանի հատկապես փողի պարկի լակեյներին: Վորովհետև «կարմիր-գվարդիական» գրոհը կապիտալի դեմ անշուշտ իր ժամանակ հանգամանքների թելադրանք էր. նախ և առաջ կապիտալը դիմադրում էր¹ ռազմականորեն, հանձին կերենակու և կրամանովի, Սավինկովի և Գոցի (Գեզեչկորին այժմ էլ այդպես է դիմադրում), Դուտովի և Բադայեվսկու: Ռազմական դիմադրությունն այլ կերպ խորտակել չի կարելի, քան ռազմական միջոցներով, և կարմիր-գվարդիականները կատարեցին աշխատավորներին և շահագործվողներին շահագործողների լծից ազատագրելու ամենաազնիվ և մեծագույն պատմական գործը:

Յերկրորդ՝ մենք այն ժամանակ կառավարման մեթոդը չեյինք կարող առաջին պլանի վրա դնել ճնշման մեթոդի փոխարեն նաև այն պատճառով, վոր կառավարման արվեստը մարդկանց հետ բնածին չէ, այլ սովորում է փորձով: Այն ժամանակ մենք այդ փորձը չունեյինք: Այժմ այն կա: Յերրորդ՝ այն ժամանակ մեզ մոտ, մեր տրամադրությունն տակ չեյին կարող լինել գիտելիքների և տեխնիկայի զանազան ճյուղերի մասնագետներ, վորովհետև նրանք կամ ճակատամարտ եյին մղում Բազայեվսկիների շարքերում, կամ դեռևս հնարավորություն ունեյին սխառեմատիկ և համառ պայսիվ դիմադրություն ցույց տալ սաքսաժով: Իսկ այժմ մենք սաբոտաժը կոտրել ենք: «Կարմիր-գվարդիական» գրոհը կապիտալի դեմ հաջող էր, հաղթական էր, վորովհետև մենք հաղթեցինք կապիտալի թե՛ ռազմական դիմադրությունը և թե՛ սաբոտաժային դիմադրությունը:

Արդյոք այդ նշանակում է, վոր մեզապես տեղին է, բոլոր հանգամանքներում տեղին է «կարմիր-գվարդիական» գրոհը կապիտալի դեմ, վոր մենք կապիտալի դեմ պայքարի այլ միջոց-

¹ Ձեռագրում՝ «կապիտալն այն ժամանակ դիմադրում էր»: Խմբ.:

ներ չունենք: Այդպես մտածելը տղայամտություն կլիներ: Մենք հաղթեցինք թեթև հեծելազորով, սակայն մենք ունենք նաև ծանր հրետանի: Մենք հաղթում եյինք ճնշման մեթոդներով, մենք կկարողանանք հաղթել նաև կառավարման մեթոդներով: Թշնամու դեմ պայքարելու մեթոդները պետք է կարողանալ փոփոխել, յերբ փոխվում են հանգամանքները: Մենք և վուչ մի ըուպե չենք հրաժարվի պարոնայք Սավինկովների և Գեզեչկորինների, ինչպես և ամեն տեսակ կալվածատիրական և բուրժուական այլ հակահեղափոխականների «կարմիր-գվարդիական» ճնշումից: Սակայն մենք այնքան հիմար չենք լինի, վոր «կարմիր-գվարդիական» յեղանակներն առաջին տեղը դնենք այն ժամանակ, յերբ կարմիր-գվարդիական գրոհների անհրաժեշտությունը չըջանը հիմնականում վերջացել է (և վերջացել է հաղթականորեն) և յերբ դուռը բացվում է պրոլետարական պետական իշխանություն կողմից բուրժուական մասնագետներին ոգտագործելու շրջանը՝ հողն այնպես վերահսկելու համար, վոր նրա վրա վորեք բուրժուազիա ամենևին չկարողանա բուռնել:

Այս յուրահատուկ դարաշրջան է, կամ ավելի ճիշտ՝ զարգացման մի շրջան, և կապիտալին վերջնականապես հաղթելու համար պետք է կարողանալ մեր պայքարի ձևերը հարմարեցնել այդպիսի շրջանի յուրահատուկ պայմաններին:

Վ Առանց դիտությունների, տեխնիկայի, փորձի զանազան ասպարեզների մասնագետների ղեկավարություն, անկարելի յե սոցիալիզմին անցնել, վորովհետև սոցիալիզմը պահանջում է գիտակից և մասսայական շարժում հառաջ, դեպի աշխատանքի ամենաբարձր արտադրողականություն՝ կապիտալիզմի համեմատությամբ և կապիտալիզմի ձևեր բերած հիմքի վրա: Սոցիալիզմը պետք է իր ձևով, իր յեղանակներով՝ կոնկրետ ասենք՝ խորհրդային յեղանակներով իրականացնի այդ շարժումը դեպի առաջ: Իսկ մասնագետներն իրենց մասսայով անխուսափելիորեն բուրժուական են այն հասարակական կյանքի բոլոր պայ-

մանները բերումով, վորը նրանց դարձրել է մասնագետներ: Յեթե մեր պրոլետարիատը, իշխանության տեր դառնալով, արագ լուծեր հաշվառման, վերահսկողության, համաժողովրդական մասշտաբով կազմակերպելու խնդիրը (այդ անիրագործելի յեր պատերազմի և Ռուսաստանի հետամնացության հետևանքով), այն ժամանակ կոտրելով սաբոտաժը, մենք ընդհանուր հաշվառումով և վերահսկողությամբ ամբողջովին մեզ կենթարկեյինք բուրժուական մասնագետներին: Հաշվառման և վերահսկողության նշանակելի չափով «ուշանալու» պատճառով մենք թեև կարողացանք հաղթել սաբոտաժը, բայց մենք դեռևիմ չստեղծեցինք այնպիսի պայմաններ, վորոնք մեր տրամադրության տակ զենյին բուրժուական մասնագետներին, սաբոտաժիկներին մասսան «ծառայում ե», բայց լավագույն կազմակերպիչներին ու խոշորագույն մասնագետներին պետութիւնը կարող է ոգտագործել կամ ինչպես առաջ՝ բուրժուական ձևով (այսինքն՝ բարձր վարձատրությամբ), կամ նոր՝ պրոլետարական ձևով (այսինքն՝ ներքեից համաժողովրդական հաշվառման և վերահսկողության այնպիսի պայմաններ ստեղծելով, վորոնք անխուսափելիորեն և ինքնին կենթարկեյին և կներգրավեյին մասնագետներին):

Մենք այժմ հարկ կզգայինք դիմելու հին, բուրժուական միջոցին և համաձայնելու բուրժուական խոշորագույն մասնագետների «ծառայության» անչափ բարձր հատուցման հետ: Գործին ծանոթ բոլոր մարդիկ տեսնում են այդ, սակայն բոլորը չեն, վոր խորասուզվում են պրոլետարական պետության կողմից նման միջոց կիրառելու նշանակության մեջ: Պարզ է, վոր նման միջոցը մի կոմպրոմիս է, նահանջ Պարիզի Կոմունայի և ամեն տեսակ պրոլետարական իշխանության սկզբունքներից, իշխանութիւններ, վորոնք պահանջում են ռոճիկները հասցնել միջին բանվորի վարձատրության, վորոնք պահանջում են կարիերիզմի դեմ պայքարել գործով և վոչ թե խոսքերով:

Այդ դեռ քիչ է: Պարզ է, վոր այդպիսի միջոցը՝ վոչ միայն

հարձակման դադարեցում է — վորոշ ապարեղում և վորոշ չափով — կապիտալի դեմ (վորովհետև կապիտալը զրամական գումար չէ, այլ վորոշ հասարակական հարաբերութիւն), այլ և մի քանի հեռ գնալ է մեր սոցիալիստական, խորհրդային, պետական իշխանության կողմից, վորն ամենասկզբից ազդարարել է և վարել բարձր ռոճիկները մինչև միջին բանվորի աշխատավարձն իջեցնելու քաղաքականութիւնը¹:

Իհարկէ, բուրժուազիայի լակեյները, առանձնապես նրանց մանր տեսակը, ինչպես՝ մենշեիկները, նովոֆոդնականները, աշեսները, պետք է հռհռան այն խոստովանութիւնից, վոր մենք մի քայլ հետ ենք անում: Բայց մենք հոհուցի վրա ուշադրութիւն դարձնելու հարկ չունենք: Մենք պետք է ուսումնասիրենք սոցիալիզմ տանող վերին աստիճանի զգալար և նոր ուղու առանձնահատկութիւնները՝ չքողարկելով մեր սխալներն ու թուլութիւնները, այլ աշխատելով ժամանակին լրացնել չափարտված գործը: Մասսաներից թագցնել, վոր բուրժուական մասնագետներին անչափ բարձր վատասկներով զրավելը մի նահանջ է Կոմունայի սկզբունքներից, կնշանակել իջնել մինչև բուրժուական քաղաքագետների մակարդակը և խաբել մասսաներին: Բացահայտ կերպով պարզաբանել, թե ինչպես և ինչու մենք մի քայլ հետ արինք, ապա հրապարակով քննել, թե ինչ միջոցներ կան բացթողումը լրացնելու, այդ նշանակում է դաստիարակել մասսաներին և նրանց հետ միասին վորձի հի-

¹ Ժողովրդական Կոմիսարների խորհրդի 1917 թ. դեկտեմբերի 1-ի (նոյեմբերի 18-ի) դեկրետով ժողովրդական Կոմիսարների և բարձրագույն պաշտոնյաների համար առավելագույն ռոճիկ է վորոշվել ամսական 500 ռուբլի (տես «Газ. Вр. Раб. и Кр. Прав.», 1917 թ. դեկտեմբերի 6 (նոյեմբերի 23) № 16): Աշխատողու Ա. Շլյապնիկովի հարցապնդումով՝ ժողովուրդը այդ դեկրետի հրատարակումից քիչ հետո մի վորոշում կայացրեց, վորով թույլ է տրվում գիտության և տեխնիկայի բարձրորակ մասնագետների աշխատանքը բարձր գնահատությամբ վարձատրելու: Խմբ.:

ման վրա սովորել սոցիալիզմի կառուցումը: Պատմություն մեջ հազիվ թե յեղած լինի գեթ մեկ պատերազմական հաղթական արշավանք, յերբ հաղթողն առիթ չունենար առանձին սխալներ կատարելու, մասնակի պարտություններ կրելու, վորեն բանում և վորեն տեղ ժամանակավորապես հետ նահանջելու: Իսկ կապիտալիզմի դեմ ձեռնարկած մեր «արշավանքը» միլիոն անգամ ավելի զգալի է ամենազգալի պատերազմական արշավանքից, և մասնավոր ու մասնակի նահանջից վհատվելը հիմարություն կլիներ և խայտառակություն:

Հարցին մոտենանք գործնական տեսակետից: Դիցուք, թե Ռուսաստանի խորհրդային հանրապետությունն անհրաժեշտ են 1000 առաջնակարգ գիտնականներ և մասնագետներ՝ գիտությունների, տեխնիկայի, պրակտիկ փորձի զանազան ասպարեզներից՝ ժողովրդական աշխատանքը ղեկավարելու համար, նպատակ ունենալով հնարավորության չափ արագ յերկերը վերականգնել տնտեսապես: Դիցուք, թե այդ «առաջին մեծություն աստղերին» հարկ կլինի վճարել — դրանց մեծամասնությունն, իհարկե, այնքան ալյասերված է բուրժուական բարքերով, փորքան նա սիրով ճշում է բանվորների ալյասերված լինելու մասին — յուրաքանչյուրին տարեկան 25.000 ռ.: Դիցուք, թե այդ գումարը (25 միլիոն ռուբլին) պետք է կրկնապատկել (նախատեսելով պարգևներ տալ կազմակերպական-տեխնիկական առաջադրանքներից կարևորներն առանձնապես հաջող և արագ կատարելու համար) կամ նույնիսկ քառապատկել (նախատեսելով գրավել միքանի հարյուր արտասահմանյան ավելի պահանջկոտ մասնագետներ): Հարց է առաջանում, թե արդյոք կարելի՞ չէ խորհրդային հանրապետության համար անչափ շատ կամ նրա ուժերից վեր համարել տարեկան հիսուն կամ հարյուր միլիոն ռուբլու ծախսը՝ ժողովրդական աշխատանքը գիտության և տեխնիկայի վերջին խոսքով վերակառուցելու համար: Իհարկե, վնչ: Դիտակից բանվորների և գյուղացիների

ճնշող մեծամասնությունը հավանություն կտա այդ ծախսին, գործնական կյանքից իմանալով, վոր մեր հետամնացությունը մեզ հարկադրում է միլիարդներ կորցնել, իսկ մենք դեռեմք չենք հասել այն աստիճանի կազմակերպվածության, հաշվառման և վերահսկողության, վորպեսզի բուրժուական ինտելիգենցիայի «աստղերին» ամբողջովին և կամավոր մասնակից անենք մեռած խառանքներին:

Հասկանալի չէ, վոր հարցն ունի նմանապես իր մյուս կողմը: Բարձր ուժիկների ալյասերիչ ազդեցությունն անվիճելի չէ նաև խորհրդային իշխանության վրա (մանավանդ վոր հեղաշրջման արագության դեպքում այդ իշխանության չեյին կարող չհարել վորոշ քանակի ավանտյուրիստներ և խաբեբաններ, վորոնք զանազան կոմիսարներից անշնորհների կամ անխիղճների հետ միասին չեն հրաժարվի դառնալու «աստղեր»... զանազորփողության) և բանվորական մասսայի վրա: Սակայն բանվորների և չքավոր գյուղացիների մեջ յեղած բոլոր մտածող և աշխիվ մարգիկ կհամաձայնեն մեզ հետ, կխոստովանեն, վոր մենք ի վիճակի չենք մեկեն ազատվելու կապիտալիզմի գեշ ժառանգությունից, վոր խորհրդային հանրապետությունն ազատել 50 կամ 100 միլիոն ռուբլու «տուրքից» (տուրք մեր սեփական հետամնացության համար հալածողովրդական հաշվառումն ու վերահսկողությունը ներքևից կազմակերպելու գործում) կարելի չէ վնչ ալ կերպ, քան կազմակերպվելով, սեղմելով կարգապահությունը հենց իրենց մեջ, իր շրջապատը մաքրելով բոլոր նրանցից, ովքեր «պահպանում են կապիտալիզմի ժառանգությունը», «հետևում են կապիտալիզմի տրադիցիաներին», այսինքն՝ գործափախներից, ձրիակերներից, զանազորփողներից (այժմ ամբողջ հողը, բոլոր գործարանները, բոլոր յերկաթուղիները խորհրդային հանրապետության «զանձն» են): Յեթե գիտակից առաջավոր բանվորներն ու չքավոր գյուղացիները խորհրդային հիմնարկությունների ոգնությունը կարողանան մեկ տարում կազմակերպվել, կարգապահ դառնալ, գոտե-

պնդվել, ստեղծել աշխատանքային հզոր կարգապահություն, այն ժամանակ մենք մի տարի հետո մեզնից դեն կշարտենք այս «տուրքը», վորը կարելի չե կրճատել նույնիսկ ավելի առաջ... ճիշտ այնչափ, վորչափ հաջողություն ունենա մեր բանվորագյուղացիական աշխատանքային կարգապահությունը և կազմակերպվածությունը: Վորքան մենք ինքներա, բանվորներն ու գյուղացիները¹, արագ սովորենք աշխատանքային լավագույն կարգապահությունը և աշխատանքի ամենաբարձր տեխնիկան, այդ գիտության համար ողտադործելով բուրժուական մասնագետներին, մենք այնքան շուտ կազատվենք այդ մասնագետների տրվող ամեն տեսակ տուրքից²:

Մթերքների արտադրության և բաշխման նկատմամբ համաժողովրդական հաշվառում և վերահսկողություն կազմակերպելու մեր աշխատանքը՝ պրոլետարիատի ղեկավարությամբ, խիստ հետ ե մնացել եքսպրոպրիատորներին անմիջական եքսպրոպրիացիայի յենթարկելու մեր աշխատանքից: Այս դրությունը հիմնական նշանակություն ունի ներկա մոմենտի առանձնահատկությունները և Խորհրդային իշխանության այստեղից բղձխող խնդիրները հասկանալու համար: Բուրժուազիայի դեմ մղվող կռվում ծանրության կենտրոնը տեղափոխվում ե այդպիսի հաշվառում և վերահսկողություն կազմակերպելու վրա: Միայն դրանից յենելով կարելի չե ճիշտ սահմանել տնտեսական և ֆինանսական քաղաքականության հերթական խնդիրները բանկերի ազգայնացման, արտաքին առևտրի մոնոպոլիզացիայի, դրամական շրջանառության վրա պետական վերահսկողություն ունենալու, պրոլետարական տեսակետից բավարար գույքային և յեկամտային հարկ մտցնելու, աշխատանքային պարհակ մտցնելու ասպարեզում:

Այդ ասպարեզների սոցիալիստական վերափոխության մեջ

¹ Զեռագրում՝ «առաջավոր բանվորներն ու գյուղացիները»: Խմբ.:

² Զեռագրում «տուրքից» գրված և չակերտների մեջ: Խմբ.:

մենք չափազանց հետ ենք մնացել (խակ դրանք շատ և շատ եյական ասպարեզներ են), և հետ ենք մնացել հատկապես այն պատճառով, վոր անբավարար են կազմակերպված հաշվառումն ու վերահսկողությունն ընդհանրապես: Հասկանալի չե, վոր այդ ամենադժվարին խնդիրներից մեկն ե և պատերազմի ստեղծած քայքայման պայմաններում լուծում կարող ե ստանալ միայն տևական ժամանակամիջոցում, սակայն չի կարելի մոռանալ, վոր հատկապես այստեղ բուրժուազիան, — խակ առանձնապես բաղձաքանակ մանր և գյուղացիական բուրժուազիան, — ամենալուրջ կռիվ ե մղում մեր դեմ՝ խախտելով կարգի դրվող վերահսկողությունը, խախտելով, որ., հացի մենաշնորհը, դիրքեր նվաճելով չարաշահության և չարաշահ առևտրի համար: Այն, ինչ մենք արդեն ղեկըստավորել ենք, դեռ շատ անբավարար ենք կիրարկել կյանքում, և մոմենտի գլխավոր խնդիրն ե հատկապես բոլոր ջանքերը կենտրոնացնել այն վերափոխությունների հիմքերը գործոն, պրակտիկ ձևով իրագործելու վրա, վորոնք արդեն դարձել են զրենք, սակայն դեռևս իրականություն չեն դարձել:

Վերպեսզի առաջիկայում շարունակենք բանկերի ազգայնացումը և անշեղորեն դիմենք բանկերը հասարակական հաշվետվության հանգուցակետեր դարձնելուն սոցիալիզմի ժամանակ, պետք ե ամենից առաջ և ամենից շատ ունալ հաջողություններ ձեռք բերել ժողովրդական բանկի բաժանմունքների թիվն ավելացնելու, ավանդներ ներգրավելու, ժողովրդի համար դրամ մուծելու և ստանալու գործաբքը թեթևացնելու, «պոչերի» վերացման, կաշառակերներին և խաբեբաներին բռնելու և գնդակահարելու մեջ և այլն: Սկզբում իրապես կյանքում կիրարկել ամենահասարակը, լավ կազմակերպել առևտր, խակ հետո արդեն նախապատրաստել ավելի բարդը:

Ամրացնել և կարգավորել այն պետական մենաշնորհները (հացի, կաշվի նկատմամբ և այլն), վորոնք արդեն մտցված են, և զրանով նախապատրաստել արտաքին առևտրի մենաշնորհումը պետության ձեռքով. առանց այդպիսի մենաշնորհման

մենք չենք կարող «տուրք» վճարելով ազատվել ոտաբերկրյա կապիտալից: Իսկ սոցիալիստական շինարարութեան ամբողջ հնարավորութիւնը կախած է նրանից, թե արդո՞ք մենք կարող ենք վորոշ անցումային ժամանակամիջոցում վորոշ տուրք տալով ոտաբերկրյա կապիտալին՝ պաշտպանել մեր ներքին տնտեսական ինքնուրույնութիւնը:

Ընդհանրապես հարկեր, իսկ առանձնապես գույքային և յեկամտային հարկ վերցնելու մեջ մենք նույնպես անչափ շատ հետ ենք մնացել: Բուրժուազիայի վրա ռազմական տուգանք դնելը մի միջոց է, վորն սկզբունքով անպայման ընդունելի յե և պրոլետարական հավանութեան արժանի, ցույց է տալիս, վոր այդ տեսակետից մենք դեռևս ավելի մոտ ենք գտնվում հարուստներին (Ռուսաստանը) չքավորների համար նվաճելու յեղանակներին, քան կառավարման յեղանակներին: Բայց ավելի ուժեղ դառնալու և վորքի կանգնելու համար՝ մենք պետք է անցնենք այս վերջին յեղանակներին, մենք պետք է բուրժուազիայից վերցվող ռազմական տուգանքը փոխարինենք մշտապես և կանոնավոր վերցվող գույքային և յեկամտային հարկով, վորն ավելի շատ բան կտա պրոլետարական պետութեանը և վորը մեզինց պահանջում է հատկապես ավելի մեծ կազմակերպվածութիւն, հաշվառման և վերահսկողութեան ավելի լավ կարգավորում:

Աշխատանքային պարհակ մտցնելու հարցում մեր ուշանալը կրկին անգամ ցույց է տալիս, վոր իբրև որվա հերթական հարց առաջանում է հատկապես նախապատրաստական-կազմակերպական աշխատանքը, վորը մի կողմից պետք է վերջնականապես ամրապնդի նվաճածը, իսկ մյուս կողմից՝ անհրաժեշտ է, վորպեսզի նախապատրաստվի այն գործողութիւնը, վորը «կըջապատի» կապիտալը և կհարկադրի նրան «հանձնվել»: Աշխատանքային պարհակ մտցնելը մենք պետք է սկսենք անմիջապես, սակայն մտցնենք մեծ աստիճանականութեամբ և շրջահայաց կերպով՝

¹ Ձեռագրում «ավելի հաստատ վորքի կանգնելու համար»: Խմբ.:

գործնական փորձով ստուգելով ամեն մի քայլը և, հասկանալի յե, առաջին քայլը դարձնելով աշխատանքային պարհակ մտցնելը հարուստների համար: Աշխատանքային և սպառողական-բյուջետային գրքույկ մտցնելը ամեն մի բուրժուայի, այդ թվում նաև դյուղական բուրժուայի, համար մի լուրջ քայլ կլիներ առաջ, դեպի թշնամու կատարյալ «ըջապատումը», դեպի իսկական համաժողովրդական հաշվառման և վերահսկողութեան ստեղծումը մթերքների արտադրութեան և բաշխման նկատմամբ:

ՊԱՅՔԱՐԻ ՆՇԱՆՍԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՅԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

✓ Պետութիւնը, վոր դարեր շարունակ յեղել է ժողովրդի ճնշման և կողոպտման որդան, մեզ ժառանգութիւն է թողել մասսաների մեծադույն ստեղծութիւնն ու անվստահութիւնը դեպի այն ամենը, ինչ պետական է: Իրա հաղթահարումն անչափ դժվարին խնդիր է, վորի համար ուժ ունի միայն Խորհրդային իշխանութիւնը, բայց վորը նրանից ևս պահանջում է յերկարատե ժամանակ և հսկայական տեղիւնութիւն: Հաշվառման և վերահսկողութեան հարցի վրա—սոցալիստական հեղափոխութեան համար արմատական այդ հարցի վրա բուրժուազիայի տապալման հաջորդ որը—այդպիսի «ժառանգութիւնը» արտահայտվում է առանձնապես սուր: Անխուսափելիորեն կանցնի վորոշ ժամանակ, մինչև վոր կարվածատերերի և բուրժուազիայի տապալումից հետո առաջին անգամ իրենց ազատ զգացած մասսաները կըմբռնեն՝ փնջ թե գրքերից, այլ սեփական, խորհրդային փորձից՝ կըմբռնեն և կզգան, վոր առանց բազմակողմանի, պետական հաշվառման և վերահսկողութեան մթերքների արտադրութեան և բաշխման նկատմամբ, աշխատավորների իշխանութիւնը, աշխատավորների ազատութիւնը չի կարող դիմանալ, կապիտալիզմի լծի տակ վերադառնալն անխուսափելի յե: Բուրժուազիայի և առանձնապես մանր բուրժուազիայի

բոլոր սովորույթներն ու տրադիցիաները նույնպէս ընթանում են ընդդէմ պէսակաւմ վերահսկողութեան, հոգուտ «սրբազան մասնավոր սեփականութեան», «սրբազան» մասնավոր ձեռնարկութեան անձեռնմխելիութեան: Մենք այժմ առանձին ակնառութեամբ տեսնում ենք, թե վորքան ճիշտ է մարքսիստական այն դրույթը, թե անարխիզմը և անարխոսինգիկալիզմը բուրժուական հոսանքներ են, թե ինչ անհաշտելի ներհակութեան մեջ են նրանք սոցիալիզմի, պրոլետարական դիկտատուրայի, կոմունիզմի հանդէպ: Մյն պայքարը, վոր մղվում է հանուն մասսաների մեջ խորհրդային՝ պետական վերահսկողութեան և հաշվառման արմատացման, հանուն այդ գաղափարը կյանքում կիրարկելու, հանուն անիծյալ անցյալի հետ կապերը խզելու, վորը սովորեցրել է հաց և հազուստ ձեռք բերելու վրա նայել իբրեւ «մասնավոր» գործի, գնում-վաճառքի վրա՝ իբրեւ մի գործարքի, վորը «վերաբերում է միայն ինձ», այդ պայքարն է, վոր ունի մեծադույն, համաշխարհային-պատմական նշանակութիւն, պայքար սոցիալիստական գիտակցականութեան ընդդէմ բուրժուական-անարխիական տարերայնութեան: Բանվորական վերահսկողութիւնը մեզ մոտ մտցված է վորպէս որենք, սակայն կյանքի և նույնիսկ պրոլետարիատի ընդարձակ մասսաների գիտակցութեան մեջ այն հազիվ-հազ սկսում է թափանցել: Մյն մասին, թե անհաշվեալութիւնը միթերքների արտադրութեան և բաշխման գործում սոցիալիզմի սաղմերի վոչնչացում է, գանձագրութիւն է, վորումիտե ամբողջ գույքը պատկանում է գանձարանին, իսկ գանձարանը հենց ինքը Խորհրդային իշխանութիւնն է, աշխատավորութեան մեծամասնութեան իշխանութիւնը, վոր անհոգութիւնը հաշվառման և վերահսկողութեան մեջ ուղղակի ոժանդակութիւն է գերմանական և ուսական կարնիզմներին, վորոնք աշխատավորութեան իշխանութիւնը կարող են տապալել միայն այն դեպքում, յետե մենք չհաղթահարենք հաշվառման և վերահսկողութեան խնդիրները, և վորոնք ամբողջ

մոլեխիկական բուրժուազիայի ողնութեամբ, կադետների, մենշևիկների, աջ ես-երների ողնութեամբ «գարանամուտ հսկում են» մեզ՝ հարմար մոմենտի սպասելով, — այդ մասին մենք բավականաչափ չենք խոսում մեր ազիտացիայի մեջ, այդ մասին բավականաչափ չեն մտածում և խոսում առաջավոր բանվորներն ու գյուղացիները: Իսկ քանի դեռ բանվորական վերահսկողութիւնն իրողութիւն չի դարձել, քանի դեռ առաջավոր բանվորները կարգի չեն դրել և չեն մղել հաղթական և անողոր արշավանքն ընդդէմ այդ վերահսկողութիւնը խախտողների կամ վերահսկողութեան նկատմամբ անհոգների, մինչև այդ ժամանակ առաջին քայլից (բանվորական վերահսկողութիւնից) չի կարելի կատարել յերկրորդ քայլը դեպի սոցիալիզմ, այսինքն՝ անցնել դեպի արտադրութեան բանվորական կարգավորումը:

✓ Սոցիալիստական պետութիւնը կարող է առաջ գալ միայն իբրեւ արտադրողական-սպառողական կոմունաների մի ցանց, վորոնք բարեխղճորեն հաշվառման են յենթարկում իրենց արտադրութիւնն ու սպառումը, տնտեսում են աշխատանքը, անշեղորեն բարձրացնում են նրա արտադրողականութիւնը և զբանով հնարավորութիւն ստանում բանվորական որն իջեցնելու որական մինչև յոթ, մինչև վեց ժամի և ավելի պակաս: Առանց կարգավորելու հացի յեվ հացը ձեռք բերելու (իսկ հետո նաև մնացած բոլոր անհրաժեշտ մթերքների) համաժողովրդական համայնապարփակ ամենախիստ հաշվառումն ու վերահսկողութիւնը, վոչ մի բան չի կարելի անել: Կապիտալիզմը մեզ ժառանգութիւն է թողել մասսայական կազմակերպութիւններ, վորոնք շնորհիւ են թեթեւեղութեան մթերքների բաշխման մասսայական հաշվառման և վերահսկողութեան անցումը — սպառողական ընկերութիւնները: Ռուսաստանում նրանք ավելի թույլ են զարգացած, քան առաջավոր յերկրներում, բայց այնուամենայնիվ ընդգրկել են ավելի, քան տաս միլիոն անգամ: Սպառողական ընկերութիւն-

ների վերաբերյալ այս օրերս հրատարակված ղեկըետը չափազանց կարևոր նշանակություն ունեցող մի յերևույթ է, վորն ակնառու ցույց է տալիս Սորհրդային սոցիալիստական հանրապետության յուրահատուկ զբոլթյունն ու խնդիրները տվյալ մոմենտին:

✓ Դեկըետը մի համաձայնություն է բուրժուական կոոպերատիվների և բանվորական կոոպերատիվների հետ, վորոնք մնում են բուրժուական տեսակետի վրա¹: Համաձայնությունը կամ կոմպրոմիսը նախ և առաջ այն է, վոր հիշատակված հիմնարկությունների ներկայացուցիչները վոչ միայն մասնակցեցին ղեկըետի քննության, այլ և վճռակոն ձայնի փաստական իրավունք ստացան, վորովհետև ղեկըետի վորոշ մասերը, վորոնք հանդիպեցին այդ հիմնարկությունների վճռական ուղղիցիային, հանվեցին: Յերկրորդ՝ ըստ ելուլթյան կոմպրոմիսը Սորհրդային իշխանության հրաժարումն է կոոպերատիվի մեջ անվճար մոնեթու սկզբունքից (միակ հետևողական պրոլետարական սկզբունքը), ինչպես և տվյալ վայրի ամբողջ բնակչությունը մեկ կոոպերատիվի մեջ համախմբելուց: Վերպես նահանջ այդ միակ սոցիալիստական սկզբունքից, վորը համապատասխանում է ղասակարգերի վոնչնացման խնդրին, «բանվորական ղասակարգային կոոպերատիվներին» իրավունք տրվեց մնալու (վորոնք այս ղեպքում «ղասակարգային» են անվանվում միայն այն պատճառով, վոր նրանք յենթարկվում են բուրժուազիայի ղասակարգային շահերին): Վերջապես Սորհրդային իշխանությունն առաջարկությունը՝ բուրժուազիային ամբողջովին վտարելու կոոպերատիվների վարչություններից, նույնպես անչափ թուլացված է, և վարչությունների մեջ մոնեթու արգելքը տարածված միայն մասնավոր կապիտալիստական բնույթի առևտրական և արդյունաբերական ձեռնարկատերերի վրա:

¹ Կոոպերատորների հետ տեղի ունեցող բանակցությունները, կապված սպառողական միությունների վերաբերյալ ղեկըետի մշակման հետ, վարվում էին 1918 թ. ամբողջ մարտ ամսվա ընթացքում և

Յեթե պրոլետարիատը Սորհրդային իշխանություն միջոցով գործելով կարողանար ընդհանուր պետական մասշտաբով կարգի ղնել հաշվառումն ու վերահսկողությունը, կամ թեկուզ այդ վերահսկողության հիմունքները, այն ղեպքում նման կոմպրոմիսների կարիք չեր լինի: Սորհուրդների պարենավորման բաժինների, Սորհուրդներին կից մասնակարարման մարմինների միջոցով մենք բնակչությունը կհամախմբեյինք մեկ միասնական, պրոլետարական ղեկավարություն ստացող կոոպերատիվի մեջ առանց բուրժուական կոոպերատիվների ոժանդակություն, առանց ղիջումների այն զուտ բուրժուական սկզբունքին, վորը ղրդում է բանվորական կոոպերատիվին բանվորական մնալու բուրժուական կոոպերատիվների կողմից, փոխանակ ամբողջովին իրեն յենթարկելու բուրժուական այդ կոոպերատիվը, ձուլելով յերկուսն ել, իրեն վերցնելով ամբողջ վարչությունը, իր ձեռքն առնելով հսկողությունը հարուստների սպառման նկատմամբ:

Նման համաձայնություն կնքելով բուրժուական կոոպերատիվների հետ, Սորհրդային իշխանությունը կոնկրետ սահմանել է իր տակտիկական խնդիրներն ու գործողությունն յուրահատուկ մեթոդները ղարգացման տվյալ շրջանի համար, վորը հետևյալն

ապրիլի սկզբին, սկսած այն ժամանակից, յերբ կոոպերացիայի ներկայացուցիչները խիստ բացասական ղիք բունեցին ղեպի սպառողական կոոպերատիվների վերաբերյալ ղեկըետի այն նախագիծը, վոր մշակել եր Պարենժողկոմատն ի ղարգացում լենինյան նախագծի (տես XXII հատորը, էջ 210—217 և ծանոթ. 77): Այդ բանակցություններում կոոպերացիայի ներկայացուցիչներն սկզբում պնդում էին, թե կոոպերատիվ կազմակերպությունները պետք է լիապես անկախ լինեն Սորհրդային իշխանություն մարմիններից և կոոպերատիվները պետք է սպասարկեն միմիայն իրենց անդամներին: Մարտի վերջին մշակված համաձայնության նախագիծը ժողովրդական կոմիսարների խորհուրդը հաստատեց ապրիլի 10-ին, ընդ վորում Լենինը նախագծի մեջ մացրեց մի ամբողջ շարք ուղղումներ, մասնավորապես ամբողջովին նա յն գրեց 11, 12 և 13 կետերը (տես XXII հատորը, Փաստաթղթեր և նյութեր, էջ 745—746): Խմբ.:

և. զեկալարելով բուրժուական տարրերին, ոգտագործելով նրանց, վորոշ մասնակի զիջումներ անելով նրանց, մենք պայմաններ ենք ստեղծում այնպիսի առաջխաղացման համար, վորն ավելի դանդաղ կլինի, քան մենք սկզբնապես կարծում էինք, բայց դրա հետ միասին՝ ավելի կայուն, ավելի լուրջ կերպով ապահովելով հիմքը և կոմունիկացիոն գիծը, ավելի լավ ամրացնելով նվաճված դիրքերը: Խորհուրդներն այժմ կարող են (յեւ պարսափոք են) չափել իրենց հաջողությունները սոցիալիստական շինարարության գործում ի միջի այլոց չափազանց պարզ, հասարակ, պրակտիկ միջոցներով: Հատկապես ինչ քանակի համայնքներում (կոմունաներում կամ գյուղերում, թաղերում և այլն) և վորքան ե մոտենում կոոպերատիվների զարգացումն այն դրության, վորպեսզի ընդգրկի ամբողջ բնակչութունը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Ամեն մի սոցիալիստական հեղափոխության մեջ պրոլետարիատի ձեռքով իշխանություն նվաճման խնդիրը լուծելուց հետո և այնչափ, վորչափ գլխավորապես և հիմնականում լուծվում ե եքսպրոպրիատորներին եքսպրոպրիացիայի յենթարկելով՝ խնդիրը, անհրաժեշտաբար առաջին պլանի վրա յե դրվում մի արմատական խնդիր՝ ստեղծել ավելի բարձր հանարակական կենսաձև, քան կապիտալիզմն ե, այսինքն՝ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, իսկ դրա կապակցությամբ (և դրա համար) նրա ավելի բարձր կազմակերպությունը: Մեր Խորհրդային իշխանությունը գտնվում ե հատկապես այնպիսի դրության մեջ, յերբ շնորհիվ շահագործողների՝ Կերենսկուց սկսած մինչև Կարնիլովի վրա տարած հաղթությունների՝ նա հնարավորություն ե ստացել անմիջականորեն մոտենալու այդ խնդրին, ընդհուպ դիմելու դրան: Յեւ այստեղ իսկույն նկատելի յե դառ-

¹ Ձեռագրում և «Известия» - յում այնուհետև գրված ե «և նրանց դիմադրությունը ճնշելու»: Խմբ.:

նում, վոր յեթե պետական կենտրոնական իշխանություն կարելի յե տիրանալ միջանի որում, յեթե շահագործողների ռազմական և սարսափալիս դիմադրությունը նույնիսկ մեծ յերկրի դանազան անկյուններում կարելի յե ճնշել միջանի շարաթում, ապա աշխատանքի արտադրողականության բարձրացման խնդրի հաստատ լուծումը պահանջում ե, համենայն դեպս (առանձնապես ամենատառապալից և ամենաքայքայիչ պատերազմից հետո) միջանի տարի: Աշխատանքի տեղական բնույթն այստեղ յենթադրվում ե անպայման որչեպիսի հանգամանքներով:

Աշխատանքի արտադրողականության վերելքը նախ և առաջ պահանջում ե ասլահովել խոշոր ինդուստրիայի նյութական հիմքը՝ զարգացնել վառելանյութի, յերկաթի, մեքենաշինություն, քիմիական արդյունաբերություն արտադրությունը: Ռուսաստանի խորհրդային հանրապետությունը ձեռնտու պայմանների մեջ ե գտնվում այնքան, վոր նա, նույնիսկ Բրեստի հաշտությունից հետո, ունի հանքերի վիթխարի պաշարներ (Ուրալում), վառելանյութի՝ Սերմոյան Սիբիրում (բարածուխ), Կովկասում և հարավ-արևելքում (նավթ), կենտրոնում (տորֆ), անտառի, ջրային ուժերի, հումքի վիթխարի հարստություններ քիմիական արդյունաբերության համար (Կարաբուղազ) և այլն: Բնական այդ հարստությունների մշակումը նորագույն տեխնիկայի յեղանակներով՝ հիմք կստեղծի արտադրողական ուժերի շտեմնված զարգացման համար:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման մյուս պայմանը նախ և առաջ բնակչության մասսայի կրթական և կուլտուրական վերելքն ե: Այդ վերելքն այժմ ընթանում ե վիթխարի արագությամբ, վորը չեն տեսնում բուրժուական անշարժությամբ կուրացած մարդիկ, վորոնք անընդունակ են բժրոնելու, թե ժողովրդական «ստորին խավերում» վորքան բուռն ձգտում կա այժմ դեպի լույս և նախաձեռնություն՝ շնորհիվ խորհրդային կազմակերպման: Յերկրորդ՝ տնտեսական

վերելքի պայման ե նաև աշխատավորութեան կարգապահութեան, աշխատանքի ունակութեան, ոգտակարութեան, աշխատանքի ինտենսիվութեան, նրա լավագույն կազմակերպման բարձրացումը:

Այս կողմից բանն առանձնապես վատ ե մեզ մոտ ե նույնիսկ անհուսալի յե, յեթե հավատանք այն մարդկանց, վորոնք իրենց վախեցնել են տվել բուրժուազիայից կամ շահամոլութեամբ ծառայում են նրան: Այդ մարդիկ չեն հասկանում, վոր չի յեղել ե չի կարող լինել մի հեղափոխութիւն, յերբ հնի կողմնակիցները չաղաղակեն քայքայման մասին, անարխիայի մասին ե այլն: Բնական ե, վոր մասսաների մեջ, վոր նորերս միայն գեն են շարտել չտեսնված վայրագ ճնշումը, տեղի յե ունենում խոր ու լայն յեռում, խմորում, վոր աշխատանքային կարգապահութեան նոր հիմունքների մշակումը շատ յերկար մի պրոցես ե, վոր մինչև կալվածատիրոջ ե բուրժուազիայի վրա լիակատար հաղթութիւն տանելը նման մշակումը չեր կարող նույնիսկ սկսվել:

Սակայն, ամենևին չենթարկվելով այն հաճախ կեղծ հուսահատութեան, վոր տարածում են բուրժուաներն ու բուրժուական ինտելիգենտները (վորոնք հուսահատվել են իրենց հին արտոնութիւնները պաշտպանելուց), մենք վոչ մի դեպքում չպետք ե քողարկենք բացահայտ չարիքը: Ընդհակառակը՝ մենք պետք ե հայտարարենք այդ չարիքը ե ուժեղացնենք պայքարի խորհրդային յեկանակները նրա դեմ, վորովհետև սոցիալիզմի հաջողութիւնն անկարելի յե առանց պրոլետարական գիտակից կարգապահութեան հաղթութեան մանր-բուրժուական տարերային անարխիայի՝ կերենսկիականութեան ե կարնիլովականութեան հնարավոր վերականգնման այդ իսկական գրավականի նկատմամբ:

Որոսաստանի պրոլետարիատի ամենազիտակից ավանգարդն իրեն արդեն խնդիր ե դրել բարձրացնելու աշխատանքային կարգապահութիւնը: Որինակ՝ մետաղագործների միութեան կենտ-

րոնական կոմիտեյում ե արհեստակցական միութիւնների կենտրոնական խորհրդում սկսված ե համապատասխան միջոցառումների ե դեկրետների նախագծերի մշակումը¹: Այդ աշխատանքը պետք ե ամբողջ ուժով պաշտպանել ե առաջ մղել: Հերթի պետք ե դնել, պրակտիկ կերպով կիրարկել ե փորձել գործավարձային վճարումը, այն բազմաթիվ մոմենտների կիրարկումը, ինչ գիտական ե ե պրոգրեսիվ Տեյլորի սխտեմում, աշխատավարձի համաչափումն մթերքների արտադրանքի կամ յերկաթուղային ե ջրային տրանսպորտի շահագործման արդյունքների ընդհանուր հանրագումարների հետ ե այլն:

Որոս մարդը վատ աշխատող ե առաջավոր ազգերի համեմատութեամբ: Յեւ այդ ուրիշ կերպ լինել չեր կարող ցարիզմի ռեժիմի ե ճորատտիրական իրավունքի մնացորդների կենդանութեան դեպքում: Աշխատել սովորելը — այդ խնդիրն իր ամբողջ ծավալով խորհրդային իշխանութիւնը պետք ե դնի ժողովրդի առաջ: Այս տեսակետից կապիտալիզմի վերջին խոսքը՝ Տեյլորի սխտեմը, ինչպես ե կապիտալիզմի բոլոր պրոգրեսները, իր մեջ միացնում ե բուրժուական շահագործման նրբացած գազանութիւն ե մի շարք ամենահարուստ գիտական նվաճումներ՝ աշխատանքի ժամանակ կատարվող մեխանիկական շարժումների վերլուծութեան, ավելորդ ե անհարմար շարժումների վտարման, աշխատանքի ամենականոնավոր յեղանակներ մշակելու, հաշվառման ե վերահսկողութեան լավագույն սխտեմներ մտցնելու գործում ե այլն: Խորհրդային հանրապետութիւնն, ինչ ել վոր լինի, պետք ե ընդորենակի գիտութեան ե տեխնիկայի բոլոր արժեքավոր նվաճումներն այդ ասպարեզում: Սոցիալիզմի իրականացումը կվորոշի հատկապես այն հաջողութիւններով, վոր մենք կունենանք խորհրդային իշխանութեան ե կառավարման խորհրդային կազմա-

¹ Լենինը նկատի ունի արհեստակցական միութիւնների Համառուս. խորհրդի՝ աշխատանքային կարգապահութեան մասին ընդունած կանոնադրութիւնը: Խմբ.:

կերպման գուգորդության մեջ կապիտալիզմի նորագույն պրո-
գրեսի հետ: Ռուսաստանում պետք է հիմք դնել Տեյլորի սիս-
տեմի ուսումնասիրության և դասավանդման, զրա սխտեմատիկ
փորձարկման և հարմարեցման: Դրա հետ միասին պետք է, գնա-
լով դեպի աշխատանքի արտադրողականության բարձրացումը,
հաշվի առնել կապիտալիզմից սոցիալիզմ անցումնային ժամանա-
կամիջոցի առանձնահատկությունները, վորոնք մի կողմից պա-
հանջում են, վոր զցված լինեն մրցակցության սոցիալիստական
կազմակերպման հիմքերը, իսկ մյուս կողմից՝ պահանջում են կի-
րարկել հարկադրանքն այնպես, վոր սլորելտարիատի գիկտատու-
րայի լոգունգը չապականվի պրոլետարական իշխանության շփո-
թանման կացության պրակտիկայով:

ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Անմտությունների թվին, վոր բուրժուազիան սիրով տա-
րածում է սոցիալիզմի մասին, պատկանում է այն, իբր թե սոցիա-
լիստները բացասում են մրցակցության նշանակությունը: Այնինչ իրականում միայն սոցիալիզմը՝ վոնչնացնելով դասա-
կարգերը և, հետևապես, մասսաների ստրկացումը, առաջին ան-
գամ է, վոր ճանապարհ է բաց անում մրցակցության համար
իսկապես մասսայական մասշտաբով: Յեվ հենց խորհրդային կազ-
մակերպությունը՝ կառավարման մեջ բուրժուական հանրա-
պետության ձևական դեմոկրատիզմից աշխատավոր մասսաների
իսկական մասնակցության անցնելով՝ առաջին անգամն է, վոր
լայն չափերով է դնում մրցակցությունը: Քաղաքական բնագա-
վառում այդ անհամեմատ ավելի հեշտ է դնել, քան անտեսակա-
նում, բայց սոցիալիզմի հաջողության համար հենց վերջինն է
կարևոր:

Վերջնենք մրցակցության կազմակերպման այնպիսի մի-
ջոց, վորպիսին հրապարակականությունն է: Բուրժուական հան-

րապետությունն ապահովում է այն միայն ձևականորեն, գործ-
նականում մամուլը կապիտալին յենթարկելով, «ամբոխին»
քաղաքական պիկանտ չնչին բաներով զվարճացնելով, թագ-
նելով այն, ինչ տեղի յե ունենում արհեստանոցներում, առե-
տրական գործարքներում, մատակարարություններում և այլն, «առե-
տրական գաղտնիքի» ծածկոցի տակ, վորով պաշտպանում է
«սրբազան սեփականությունը»: Խորհրդային իշխանությունը
վերացրեց առևտրական գաղտնիքը, նոր ուղի բռնեց, բայց
հրապարակականությունը տնտեսական մրցակցության նպատակ-
ներով ոգտագործելու համար մենք դեռ համարյա վոչինչ չենք
արել: Պետք է սխտեմատիկորեն ձեռնարկել այն բանին, վոր՝
բուրժուական ամբողջովին կեղծ և լալիր՝ զրպարտիչ մամուլի
անողոք ճնշման հետ միասին՝ աշխատանք տարվի այնպիսի մամուլ
ստեղծելու համար, վորը մասսաներին չզվարճացներ և չհիմարաց-
ներ քաղաքական պիկանտություններով և դատարկաբանություն-
ներով, այլ հենց առոյրյա եկոնոմիկայի հարցերը դնել մասսաների
դատաստանին, ռգներ այդպիսիները լուրջ ուսումնասիրելուն:
Յուրաքանչյուր գործարան, յուրաքանչյուր գյուղ արտադրողաբար
սպառող մի կոմունա յե, վորն իրավունք ունի և պարտավոր
է յուրովի կիրառել խորհրդային ընդհանուր որենքները («յուրովի»
վնչ թե դրանք խախտելու իմաստով), յուրովի լուծել մթերքների
ձևերի բազմազանության իմաստով), յուրովի լուծել մթերքների
արտադրության և բաշխման հաշվառման պրոբլեմը: Կապիտա-
լիզմի պայմաններում այդ առանձին կապիտալիստի, կալվածա-
տիրոջ, կուլակի «մասնավոր գործն» էր: Խորհրդային իշխա-
նության պայմաններում այդ մասնավոր գործ չե, այլ կարևո-
րագույն պետական գործ:

Յեվ մենք դեռ համարյա չենք ձեռնարկել վիթխարի, դժ-
վար, բայց դրա փոխարեն շնորհակալ գործին՝ կազմակերպել
կոմունայի մրցակցություն, հացի, զգեստի և այլ արտադրության
պրոցեսի մեջ հաշվետվություն և հրապարակականություն մըտց-

¹ Ձեռագրում՝ «չփոխարինվի լոգունգով»: Խմբ.:

նել, չոր, մեռած, բյուրեղափայլ հաշվետվությունները դարձնել
 կենդանի որինակներ՝ թե վանող և թե գրավիչ: Արտադրության
 կապիտալիստական ձևի պայմաններում առանձին որինակի,
 ասենք, վորևե արտադրական արտելի որինակի նշանակությունն
 անխուսափելիորեն ծայրահեղ աստիճան սահմանափակված էր,
 և միայն մանր-բուրժուական իլյուզիան կարող էր յերազել
 բարեգործական հիմնարկների որինակների ազդեցությամբ կա-
 պիտալիզմն ուղղելու մասին: Քաղաքական իշխանությունը
 պրոլետարիատի ձեռքն անցնելուց հետո, եքսպրոպրիատորներին
 եքսպրոպրիացիայի յենթարկելուց հետո բանն արմատապես
 փոխվում է և, համաձայն այն բանի, ինչ բազմիցս մատնանշել
 են ականավոր սոցիալիստները, — որինակի ուժն առաջին անգամ
 է, վոր հնարավորություն է ստանում իր մասսայական ազդե-
 ցությունը ցույց տալու: Որինակելի կոմունաները պետք է
 ծառայեն և կծառայեն հետաֆուտ կոմունաներին վորպես դա-
 տիարակներ, ուսուցիչներ, առաջադիմության դրդիչներ: Մա-
 մուլը պետք է սոցիալիստական շինարարության զենք լինի
 ամենայն մանրամասնությամբ ծանոթացնելով որինակելի կոմու-
 նաների հաջողություններին հետ, ուսումնասիրելով նրանց հաջո-
 րությունների պատճառները, նրանց տնտեսության յեղանակ-
 ները, մյուս կողմից «սև տախտակի» բարձրացնելով այն կոմու-
 նաները, վորոնք համառությամբ պահպանում են «կապիտալիզմի
 տրագիցիաները», այսինքն անարխիան, դատարկապորտությունը
 անկարգությունը, չարաշահությունը: Ստատիստիկական կապիտա-
 լիստական հասարակության մեջ «կազմոնների մարզկանց» կա-
 նեղ մասնագետների բացառիկ գործն էր, — մենք պետք է այ-
 մոցենք մասսաների մեջ, ժողովրդականացնենք այն, վորպեսզի
 աշխատավորներն աստիճանաբար վաթժվեն իրենք հասկանալ
 տեանել, թե ինչպես և վորքան պիտի աշխատել, ինչպես և ինչ
 քան կարելի յե հանգստանալ, — վորպեսզի առանձին կոմունա-
 ների տնտեսության գործարար հանրագումարների համեմա-

թույլտյունն ընդհանուր հետաքրքրության և ուսումնասիրու-
 թյան առարկա դառնա, վորպեսզի աչքի ընկնող կոմունաներն
 անհապաղ պարզկատարվեն (վորոշ ժամանակաշրջանում բանվո-
 րական որվա կրճատմամբ, վաստակի բարձրացմամբ, կուլտու-
 րական կամ եստեսիկ բարիքների և արժեքների մեծ քանակ
 տրամադրելով և այլն):

Յերբ նոր դասակարգը պատմական բեմ է առաջ քաշվում
 վորպես հասարակության առաջնորդ և ղեկավար, այդ յերբեք
 տեղի չի ունենում առանց ուժեղագույն «որորման», ցնցումների,
 պայքարի և փոթորիկների շրջանի մի կողմից, իսկ, մյուս կող-
 մից, առանց անվստահ քայլերի, եքսպերիմենտների, տատանում-
 ների, յերբեռումների շրջանի այն նոր յեղանակների ընտրության
 վերաբերմամբ, վորոնք համապատասխանում են նոր որչեպիվ
 կացությանը: Կործանվող ֆեոդալական ազնվականությունը վրեժ-
 խնդիր էր լինում իրեն հաղթող և դուրս քշող բուրժուազիայից
 վոչ միայն դավադրություններով, ապստամբության և ռեստավ-
 բացիայի վորձերով, այլ և այն «նորելուկների», «լավրչների»
 սխալների, անճարակության, անկարության վրա բաց թողած
 ծաղրանքի հեղեղներով, վորոնք հանդգնում են իրենց ձեռքն առ-
 նել պետության «սքբազան ղեկը» առանց իշխաններին, բարոն-
 ներին, ազնվականներին, մեծամեծներին դարերի ընթացքում
 այդ բանին նախապատրաստելու — ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես
 վրեժխնդիր են լինում այժմ բանվորական դասակարգին Ռու-
 սաստանում Կարնիլովները և Կերենսկիները, Գոցերը և Մար-
 տովները, բուրժուական գեշեֆտմախերության կամ բուրժուա-
 կան սկեպսիսի հերոսների այդ ամբողջ յեղբայրակցությունն այն
 բանի համար, վոր նա «հանդգնել է» վորձել իշխանությունը
 վերցնել:

Պետք են, հասկանալի յե, վոչ թե շաբաթներ, այլ յերկար
 ամիսներ ու տարիներ, վոր հասարակական նոր դասակարգը, և
 ընդդմին մինչ այժմ հալածված, կարիքից և խավարից ճնշված

դասակարգը, կարողանա ընտելանալ նոր դրության, շրջահայեցողություն ձեռք բերել, կարգի բերել իր գործը, առաջ քաշել իր կազմակերպիչներին: Հասկանալի յե, վոր հեղափոխական պրոլետարիատին զեկավարող կուսակցությունը չեր կարող մեծ, միլիոնավոր, տասնյակ միլիոնավոր քաղաքացիներին հարմարեցված կազմակերպական ձեռնարկությունների փորձ և ունակություն ունենալ, վոր հին, համարյա բացառապես ագիտատորական ունակությունների ձեափոխումը — շատ տեսական գործ ե: Բայց այստեղ անկարելի վոչինչ չկա, և մի անգամ յեթե մենք ունենանք փոփոխության անհրաժեշտության պարզ գիտակցություն, այն իրագործելու հաստատակամ վճռականություն, մեծ ու զգալի նպատակին հետապնդելու զիմացկունություն, — ապա մենք այն կիրագործենք: «Ժողովրդի», այսինքն բանվորների և ուրիշի աշխատանքը չհահագործող գյուղացիների մեջ կազմակերպական տաղանդներ շատ կան. նրանց հազարներով ճնշում, վոչընչացնում, դեն եր շարտում կապիտալը, նրանց դեռ չենք կարողանում գտնել, քաջալերել, վոտքի կանգնեցնել, առաջ քաշել — մենք: Բայց մենք այս կսովորենք, յեթե ձեռնարկենք այդ սովորելուն — հեղափոխական ամբողջ ենտուզիազմով, առանց վորի հաղթական հեղափոխություններ չեն լինում:

Ժողովրդական վոչ մի խորը և հզոր շարժում պատմության մեջ չի անցել առանց կեղտոտ փրփուրի, — առանց անփորձ նովատորներին քսվող ավանտյուրիստների և խաբեբանների, ինքնագովներ և ձգձղանների, առանց անմիտ իրարանցումի, անճահության, անտեղի շփոթի, առանց առանձին «առաջնորդների» փորձերի՝ վերցնել 20 գործ և վոչ մեկը վախճանի չհասցնել: Թող բուրժուական հասարակության քոթոթները, Բելառուսովից մինչև Մարտովը վնգստան ու հաջեն յուրաքանչյուր ավելորդ տաշեղի առթիվ, վոր թռչում ե մեծ հին անտառը կտրելիս: Հենց դրա համար ել նրանք քոթոթներ են, վոր հաջեն պրոլետարական փղի վրա: Թող հաջեն: Մենք մեր ճանապարհը կգնանք, աշխատելով

շատ կարելույն զգուշությամբ և համբերությամբ փորձել և ճանաչել իսկական կազմակերպիչներին, զգաստ խելք և գործնական ուղիմություն ունեցող մարդկանց, այնպիսի մարդկանց, վորոնք իրենց նվիրվածությունը սոցիալիզմին միացնում են խորհրդային կազմակերպության շրջանակներում մեծ թվով մարդկանց ամրապինդ և համերաշխ համատեղ աշխատանքն առանց աղմուկի (և հակառակ իրարանցման և աղմուկի) կարգավորելու իրենց ընդունակության հետ: Միայն այդպիսի մարդկանց, տասնապատիկ փորձելուց հետո, պետք ե, նրանց՝ պարզագույն խնդիրներից դեպի զգալի զգալի շարժելով, առաջ քաշել փողովրդական աշխատանքի զեկավարների, կառավարման զեկավարների պատասխանատու պոստերը: Մենք այդ դեռ չենք սովորել: Մենք կսովորենք այդ:

«ՆԵՐՂԱՇՆԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ» ՅԵՎ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Յորհուրդների Մոսկվայի վերջին համագումարի բանաձևը¹ առաջ ե քաշում, վորպես մոմենտի առաջնակարգ խնդիր, «ներդաշնակ կազմակերպության» ստեղծումը և կարգապահության դաշնակ կազմակերպության» ստեղծումը և կարգապահության քարձրացումը: Այդ տեսակի բանաձևերին այժմ բոլորը սիրով «ձայն են տալիս» և «ստորագրում են», բայց այն մասին, վոր դրանց կենսագործումը հարկադրանք ե պահանջում — և հարկադրանք հենց դիկտատուրայի ձևով — դրա մեջ սովորաբար չեն խորանում: Իսկ մինչդեռ մեծագույն հիմարություն և ամենաանմիտ ուտուպիզմ կլինեն յենթադրել, վոր առանց հարկադրանքի և առանց դիկտատուրայի հնարավոր ե կապիտալիզմից սոցիալիզմին անցնել: Մարքսի թեորիան այս մանր-բուրժուական-դեմոկրատական և անիշխանական անհեթեթության դեմ դուրս ե յեկել վաղուց և լիակատար վորոշակիությամբ: Յեվ 1917—1918 թվերի Ռուսաստանը հաստատում ե Մարքսի թե-

¹ Տես Յերկերի XXII հատ., եջ 530 — 532: Խմբ.:

որիան այս կողմից այնպիսի ակներևությամբ, շոշափելիությամբ և ազդեցիկությամբ, վոր միայն անհույս բութ կամ ճշմարտությունից յերես դարձնելու վորոշումը համառությամբ կայացրած մարդիկ կարող են գեռ մոլորվել դրանում: Կամ Կարնիլովի դիկտատուրան (յեթե վերցնենք նրան վերպես բուրժուական Կավենյակի ռուսական տիպ), կամ պրոլետարիատի դիկտատուրան—այլ յեղի մասին մի յերկրի համար, վոր արտակարգ արագ զարգացում է կատարում արտակարգ խիստ շրջադարձերով, պատերազմի ստեղծած հուսահատ ավերածության պայմաններում,—մի այդպիսի յերկրի համար այլ յեղի մասին խոսք անգամ չի կարող լինել: Իսկ միջին լուծումները — կամ ժողովրդին խաբել և նշանակում այն բուրժուազիայի կողմից, վորը չի կարող ճշմարտությունն ասել, չի կարող ստել, վոր նրան Կարնիլովն է պետք, կամ ել մանր-բուրժուական գեմոկրատների, Չերնովների, Ծերեթելիների և Մարտովների տափակություն է՝ նրանց շաղակրատանքով գեմոկրատիայի միասնության, գեմոկրատիայի դիկտատուրայի, համադեմոկրատական ճակատի և այլ անհեթեթությունների մասին: Ում վոր մինչև անգամ 1917 — 1918 թվերի ռուսական հեղափոխության ընթացքը չի սովորեցրել, թե միջին լուծումներն անհնարին են, նրանից պետք է հույսը կտրել:

Մյուս կողմից, դժվար չե համոզվել, վոր ամեն տեսակ անցումի ժամանակ կապիտալիզմից դեպի սոցիալիզմը՝ դիկտատուրան անհրաժեշտ է յերկու գլխավոր պատճառներով կամ յերկու գլխավոր ուղղություններով: Նախ և առաջ չի կարելի հաղթել և արմատախիլ անել կապիտալիզմն, առանց անխնա ճնշելու այն շահագործողների դիմադրությունը, վորոնք միանգամից չեն կարող զրկվել իրենց հարստություններից, իրենց կազմակերպվածության և դիտության առավելություններից և, հետևապես, բավական յերկար ժամանակվա ընթացքում անխուսափելիորեն կփորձեն տապալել չքավորության ատելի իշխա-

նությունը: Յերկրորդ, ամեն մի մեծ հեղափոխություն, իսկ սոցիալիստականն առանձնապես, յեթե նույնիսկ արտաքին պատերազմ չլիներ, անկարելի չե առանց ներքին պատերազմի, այսինքն՝ քաղաքացիական պատերազմի, վոր ել ավելի մեծ ավերածություն է նշանակում, քան արտաքին պատերազմը,— ավերածություն է մի կողմից մյուս կողմ յերերումների և տեղանշանակում է մի կողմից մյուս կողմ յերերումների հազարավոր և միլիոնավոր դեպքեր, — նշափոխությունների հազարավոր և միլիոնավոր դեպքեր, — նշանակում է մեծագույն անորոշության, անհավասարակշռության, քաոսի վիճակ: Յեւ, հասկանալի չե, հին հասարակության կազմալուծման բոլոր տարրերը, վորոնք անխուսափելիորեն շատ բազմաթիվ են, վորոնք կապված են առավելապես մանր բուրժուազիայի հետ (քանի վոր ամեն մի պատերազմ և ամեն մի ժուլգիայի հետ (քանի վոր ամեն մի պատերազմ և ամեն մի կրիզիս նրան է ամենից առաջ քայքայում և կործանում), չեն կարող «իրենց ցույց չտալ» այդպիսի խոր հեղաշրջման ժամանակ: Իսկ կազմալուծման տարրերն «իրենց ցույց տալ» չեն կարող այլ կերպ, քան հանցագործությունների, խուլիգանության, կաշառքի, չարաշահությունների, ամեն տեսակի խայտառակությունների ավելացումով: Այդ հաղթահարելու համար հարկավոր է ժամանակ և հարկավոր է յերկաթե ձեռք:

Պատմության մեջ չի յեղել վոչ մի մեծ հեղափոխություն, վորի ժամանակ ժողովուրդը բնազդաբար չգգար այս և փրկարար յորի ժամանակ ժողովուրդը բնազդաբար չգգար այս և փրկարար հաստատակամություն յերևան չբերեր՝ գողերին հանցագործության տեղում գնդակահարելով: Նախկին հեղափոխությունների դժբախտությունը հենց այն եր, վոր մասսաների հեղափոխական ենտուզիազմը, վորը պահպանում եր նրանց լարված դրությունը և նրանց ուժ եր տալիս կազմալուծման տարրերին անողորմ ճնշելու, — յերկար չեր տևում: Մասսաների հեղափոխական ճնշելու, — յերկար չեր տևում: Մասսաների հեղափոխական ենտուզիազմի այդպիսի անկայունության սոցիալական, այսինքն հասակարգային պատճառն այն պրոլետարիատի թուլությունն եր, վորը մեկնակ միայն ի վիճակի չե (յեթե նա բավականաչափ բազմաթիվ է, գիտակից, կարգապահ) իր կողմը գրավելու

աշխատավորների և շահագործվողների մեծամասնությունը (չքաղաքացիական մեծամասնությունը, յեթե ավելի պարզ ու ավելի մատչելի ասելու լինենք) և իշխանությունը բավական յերկար ժամանակ իր ձեռքը պահելու՝ բոլորովին ճնշելու համար թե բոլոր շահագործվողներին, թե կազմավորած ման բոլոր տարբերին:

Բոլոր հեղափոխությունների այս պատմական փորձը, այս համաշխարհային-պատմական — տնտեսական և բաղադրական — դասը հենց հաստատեց Մարքսը, տալով հակիրձ, խիստ, ճշգրիտ, վառ ֆորմուլա — պրոլետարիատի զիկտատուրա: Յեվ վոր ուսանական հեղափոխությունը ճիշտ և մոտեցել համաշխարհային-պատմական այս խնդրի իրագործմանը, այդ ապացուցեց խորհրդային կազմակերպության հաղթական յերթը Ռուսաստանի բոլոր ժողովուրդների և լեզուների վրայով: Վորովհետև խորհրդային իշխանությունը վոչ այլ ինչ է, յեթե վոչ պրոլետարիատի զիկտատուրայի, առաջավոր այն դասակարգի զիկտատուրայի կազմակերպական ձևը, վորը բարձրացնում է նոր դեմոկրատիզմի, պետության կառավարման մեջ ինքնուրույն մասնակցություն ունենալու համար տասնյակ ու տասնյակ միլիոնավոր աշխատավորների և շահագործվողների, վորոնք իրենց փորձով սովորում են հանձին պրոլետարիատի կարգապահ և զիտակից ավանգարդի տեսնել իրենց ամենահոսալի առաջնորդին:

Սակայն զիկտատուրան մեծ խոսք է: Իսկ մեծ խոսքերը չի կարելի քամուն տալ: Դիկտատուրան յերկաթե իշխանություն է, հեղափոխականորեն-համարձակ և արագ, անխնա ինչպես շահագործվողներին, նույնպես և խուլիզաններին ճնշելու գործում: Իսկ մեր իշխանությունը չափից դուրս փափուկ է, յուրաքանչյուր քայլափոխում ավելի նման է շփոթի, բան յերկաթի: Չի կարելի վոչ մի բոսի մոռացություն տալ, վոր բուրժուական և մանր-բուրժուական տարերքը խորհրդային իշխանության դեմ յերկու կերպ են կռվում. մի կողմից՝ դրսից

գործելով Սավինկովների, Գոցերի, Գեգեչկորինների, Կարնիլովների յեղանակներով, դավադրություններով և ապստամբություններով, դրանց «իդեոլոգիական» կեղտոտ անդրադարձումներով, ստի ու զրպարտություն հեղեղներով կադետների, աջ ես-երների և մենշևիկների մամուլում, — իսկ մյուս կողմից՝ այս տարերքը ներսից է գործում, ոգտագործելով կազմավորած ման յուրաքանչյուր տարր, կաշավելու ամեն մի թուլություն՝ անկարգապահությունը, սանձարձակությունը, քառսն ուժեղացնելու համար: Ինչքան մենք ավելի յենք մոտենում բուրժուազիայի լիակատար ռազմական ճնշման, այնքան ավելի վտանգավոր է դառնում մեզ համար մանր-բուրժուական անիշխանականություն տարերքը: Յեվ այս տարերքի դեմ չի կարելի պայքարել միայն պրոպագանդայով և ագիտացիայով, միայն մրցակցության կազմակերպամբ, միայն կազմակերպիչների ընտրությունամբ, — պայքարը պիտի մղել նաև հարկադրանքով:

Սյն չափով, վորչափով իշխանություն հիմնական խնդիրը դառնում է վոչ թե ռազմական ճնշումը, այլ կառավարումը, — ճնշման և հարկադրանքի տիպիկ արտահայտությունը կդառնա վոչ թե տեղնուտեղը գնդականարությունը, այլ դատը: Յեվ այս կողմից հեղափոխական մասսաները 1917 թ. նոյեմբերի 7-ից (հոկտեմբերի 25-ից) հետո ճիշտ ուղի բռնեցին և հեղափոխության կենսունակությունն ապացուցեցին, սկսելով կազմել իրենց, բանվորական և գյուղացիական, դատարանները, դեռ նախքան բուրժուական-բյուրոկրատական՝ դատական ապարատի արձակման ամեն տեսակի դեկրետները: Բայց մեր հեղափոխական և ժողովրդական դատարանները չափից դուրս, անհավատալի չափով թույլ են: Զգացվում է, վոր դեռ վերջնականապես չի կոտրված կալվածատերերի ու բուրժուազիայի լծից ժառանգած այն ժողովրդական հայացքը դատարանների վրա,

¹ Ուղղված է ըստ ձեռագրի: Տպագիր բնագրում՝ «բուրժուական-դեմոկրատական»: Խմբ.:

թե դրանք մի ինչ-վոր կազմողներ-խորթ հիմնարկներ են: Չկա բավականաչափ գիտակցություն, թե դատարանը հենց չքավորությանը գլխավորն պետական կառավարմանը մասնակից դարձնելու որդան է (քանի վոր դատական գործունեությունը պետական կառավարման ֆունկցիաներից մեկն է), վոր դատարանը պրոլետարիատի և չքավորագույն դուրդացիության իշխանության որդանն է, — վոր դատարանը մի գեմք է կարգապահություն դասխարակելու համար: Չկա բավականաչափ գիտակցություն այն հասարակ և ակներև իրողության, վոր յեթե Ռուսաստանի գլխավոր դժբախտությունները սոփն ու գործազրկությունն են, ապա այս դժբախտություններին չի կարելի հաղթել վոչ մի ուժգին թափով, այլ միայն բազմակողմանի, համայնապարփակ, համաժողովրդական կազմակերպությամբ և կարգապահությամբ, վորպեսզի հնարավոր լինի շատացնել հացի արտադրությունը մարդկանց համար, և հացի արտադրություն արդյունաբերության համար (վառելանյութի), իր ժամանակին տեղ հասցվի և ճիշտ բաշխվի այն, — վոր դրա համար ել սովի ու գործազրկության տանջանքների մեջ մեղավոր է յուրաքանչյուր վոք, ով խախտում է աշխատանքային կարգապահությունն ամեն մի տնտեսության մեջ, ամեն մի գործի մեջ, — վոր դրանում մեղավորին պետք է կտրենալ գտնել, դատի տալ և անխնա պատժել: Մանր-բուրժուական տարերքը, վորի գեմ մենք այսուհետև պետք է ամենահամառ պայքարը մղենք, արտահայտվում է հենց նրանով, վոր թույլ է գիտակցվում այն ժողովրդատնտեսական և քաղաքական կապը, վոր ունեն սոփն ու գործազրկությունը կազմակերպման ու կարգապահության գործում ցուցաբերվող բոլորի և յուրաքանչյուրի սանձարձակության հետ, — վոր ամուր է պահպանվում մանր-սեփականատերական հայացքը՝ յես ափելին պոկեմ, իսկ այնտեղ թեկուզ խոտ ել չածի:

Յերկաթուղային գործում, վորը, թերեւ, ամենից ակնառությամբ է մարմնացնում խոշոր կապիտալիզմի կողմից ստեղծած որ-

դանիզմի տնտեսական կապերը, սանձարձակության մանր-բուրժուական տարերքի և պրոլետարական կազմակերպվածության միջև տեղի ունեցող այս պայքարն առանձնապես ցցուն է արտահայտվում: «Կառավարչական» տարրը մեծ առատությամբ սաբոտաժիկներ, կաշառակերներ է տալիս. պրոլետարական տարրն իր լավագույն մասով պայքարում է կարգապահության համար: Բայց այս և մյուս տարրերի մեջ, իհարկե, շատ տատանվողներ, «թույլեր» կան, վորոնք ընդունակ չեն դիմադրել չարաշահության, կաշառակերության, անձնական շահի գայթակղության, վոր ձեռք է բերվում ամբողջ ապարատը փչացնելու գնով, վորի կանոնավոր աշխատանքից է կախված հաղթությունը սովի և գործազրկության դեմ:

Բնորոշ է այն պայքարը, վոր ծավալվեց այս հողի վրա վերջին դեկրետի շուրջը յերկաթուղիների կառավարման մասին, առանձին ղեկավարներին դիկտատորական լիազորություններ (կամ «անսահմանափակ» լիազորություններ) տրամադրելու վերաբերյալ դեկրետի շուրջը¹: Մանր-բուրժուական ապերաստնության գիտակից (իսկ մեծ մասամբ, հավանաբար, անգիտակից)

¹ Ժողովրդական Կոմիսարների խորհրդի՝ «ղեկավարման կենտրոնացման, ճանապարհների պահպանության և նրանց փոխադրական ունակության բարձրացման» վերաբերյալ դեկրետը հրապարակվեց «Известия В. П. И. К.»-ի 1918 թ. մարտի 26-ի № 57-ում: Այդ դեկրետի մշակման պատմությունը հետևյալն է. յերկաթուղիների ղեկավարման դեկրետի նախագիծը քննության է առնվում Ժ.Կ.Խ.-ի 1918 թ. մարտի 18-ի նիստում և վորոշվում է. «դեկրետի նախագիծը հանձնել հանձնաժողովին»:

Հանձնաժողովին առաջարկվում է նախագիծը վերանայելիս առաջնորդվել կենտրոնացման հետևյալ դրույթներով՝ 1) Մեծ կենտրոնացում: 2) Յուրաքանչյուր տեղական կենտրոնում յերկաթուղային կազմակերպությունների ընտրությամբ առանձին պատասխանատու կատարող-անձնավորություններ նշանակել: 3) Նրանց հրամաններն առանց ալլեայություն կատարելու: 4) Կարգն ապահովող ռազմական պահպանության ջոկատների դիկտատորական իրավունքներ: 5) Շար-

ներկայացուցիչներն առանձին անձերին «անսահմանափակ» (այսինքն դիկտատորական) լիազորություններ տրամադրելու մեջ ցանկանում ելին նահանջ տեսնել կոլեգիալության սկզբունքից ու դեմոկրատիզմից և խորհրդային իշխանությունն այլ սկզբունքներին: Ձախ ես-երների մեջ վորոշ տեղերում ուղղակի խուլիգանական², այսինքն վատ բնագրերին և «կորգելու» մանր-սեփականատիրական ձգտումներին դիմող, ագիտացիա զարգացավ ընդդեմ դեկրետի՝ դիկտատորության մասին³:

Ժական կազմի և նրա տեղավորման անմիջական հաշվառման ձեռնարկումներ: 6) Տեխնիկական բաժին ստեղծելու ձեռնարկումներ: 7) Վառելիք:

Իեկրետը յերկրորդ անգամ Ժ. Կ. Ս.-ի նիստում քննության է առնվում մարտի 21-ին: Լենինը հանձնաժողովի վերամշակած նախագծի մեջ մի շարք ուղղումներ է մտցնում. նա յե գրել դեկրետի 2-րդ կետը, միքանի կետեր ջնջել է և դեկրետը վերջնականապես խմբագրել է: Ժ. Կ. Ս.-ի նիստում դեկրետը հաստատվեց մարտի 23-ին:

«Зная Труд»-ն դեկրետի ծագման պատմության մասին հազորդում է հետևյալը. «Յերկաթուղիների դեկավարման վերաբերյալ դեկրետն առաջին խմբագրությանը Վիկտորին ընդունելի չհամարեց, նկատի ունենալով, վոր Վիկտորի դերը վոչնչացվել և փոխարինվել է կոմիսարի միանձյա իշխանությամբ:

Ժողովրդական Կոմիսարների խորհրդի նիստում Վիկտորի պատգամավորությունը խտտորեն առարկեց դեկրետի բովանդակության դեմ, թե ըստ ելույթյան, և թե ըստ ձևի: Ի պաշտպանություն դեկրետի հանդես յեկավ Լենինը, վորը մատնանշում էր, թե յերկաթուղայինների մեջ զոյություն ունի չարամիտ սարսուռ և թե անհրաժեշտ է վճռական միջոցներ ձեռք առնել վերացնելու այդ սարսուռը»: Խմբ.:

² Ձեռագրում՝ «դեմագոգիական»: Խմբ.:

³ Լենինն ըստ յերևութին նկատի ունի «Վիկտոր»-ի ձախ ես-երների ֆրակցիայի և Մոսկվայի հանգույցի գլխավոր ճանապարհային կոմիտեների՝ «դեկավարման կենտրոնացման, ճանապարհների պահպանության և նրանց փոխադրական ունակության բարձրացման» դեկրետի նկատմամբ ունեցած բանաձևը և «Зная Труд»-ի 1918 թ. մարտի 27-ի № 164-ում «Гр-кин» ստորագրությանը տալիս «Կենտրոնացում» հոդվածը: Խմբ.:

Իսկապես հսկայական նշանակություն ունեցող հարց ծառայավ.—նախ և առաջ սկզբունքային հարց. ընդհանրապես համատեղելի՞ յե արդյոք դիկտատորների անսահմանափակ լիազորություններով ոժտված առանձին անձերի նշանակումը խորհրդային իշխանության արմատական սկզբունքների հետ. յերկրորդ, ի՞նչ հարաբերության մեջ է գտնվում այս դեպքը—այս պրեցեդենտը, յեթե ուզում եք—իշխանության առանձնահատուկ խնդիրների հետ տվյալ կոնկրետ մոմենտում: Թե այս, թե այն խնդրի վրա պետք է մեծ ուշադրություն դարձնենք:

Վոր առանձին անձերի դիկտատորան հեղափոխական շարժումների պատմության մեջ շատ հաճախ հեղափոխական դասակարգերի դիկտատուրայի արտահայտիչը, կրողը, անցկացնողն է յեղել, այդ մասին վկայում է պատմության անառարկելի փորձը: Բուրժուական դեմոկրատիզմի հետ առանձին անձերի դիկտատուրան անկասկած համատեղվում էր: Բայց այս կետում խորհրդային իշխանության բուրժուական պախարակողները, ինչպես և նրանց մանր-բուրժուական ձայնակիցները, միշտ աճալարություն են յերևան բերում: Մի կողմից՝ նրանք խորհրդային իշխանությունը համարում են վորպես մի ինչ-վոր պարզապես անհեթեթ, անիշխանականորեն վայրենի բան, խնամքով զանց առնելով մեր բոլոր պատմական գուգահեռները և տեսական ապացույցներն այն մասին, թե խորհուրդ-ները դեմոկրատիզմի գերագույն ձևն են, նույնիսկ ավելին՝ դեմոկրատիզմի սոցիալիստական ձևի սկիզբն են. իսկ մյուս կողմից՝ նրանք մեզ ավելի բարձր դեմոկրատիզմի պահանջ են առաջադրում, քան բուրժուական դեմոկրատիզմն է, և ասում են, թե ձեռք, բուրժուական (այսինքն վոչ թե բուրժուական, այլ սոցիալիստական) խորհրդային դեմոկրատիզմի հետ անհավասար դիկտատուրան բացարձակապես անհամատեղելի յե:

Չափազանց վատ դատողություններ: Յեթե մենք անարխիստներ չենք, մենք պետք է ընդունենք պետության, այսինքն

նաւկարանի անհրաժեշտութիւնը կապիտալիզմից սոցիալիզմի անցնելու համար: Հարկադրանքի ձեւ վերջովում ե հեղափոխական տվյալ դասակարգի զարգացման աստիճանով, ապա այնպիսի առանձին հանգամանքներով, ինչպես, որինակ, յերկարատեւ և ռեակցիոն պատերազմի ժառանգութիւնն է, այնուհետեւ բուրժուազիայի և մանր բուրժուազիայի դիմադրութեան ձեւերով: Այդ պատճառով՝ խորհրդային (այսինքն սոցիալիստական) դեմոկրատիզմի և առանձին անձերի դիկտատորական իշխանութեան գործադրման միջև սկզբունքային վոչ մի հակասութիւն վճռականապես չկա: Պրոլետարական դիկտատուրայի տարբերութիւնը բուրժուականից այն է, վոր առաջինն իր հարվածներն ուղղում է շահագործող փոքրամասնութեան դեմ հոգուտ շահագործվող մեծամասնութեան, այնուհետեւ այն է, վոր առաջինն իրագործում են—և առանձին անձերի միջոցով—վոչ միայն աշխատավոր և շահագործվող մասսաները, այլև այն կազմակերպութիւնները, վորոնք կառուցված են այնպես, վոր հենց այդպիսի մասսաներին արթնացնեն, վորքի հանեն պատմական ստեղծագործութիւն կատարելու համար (խորհրդային կազմակերպութիւնները պատկանում են այս կարգի կազմակերպութիւններին):

Յերկրորդ հարցի վերաբերմամբ, թե ինչ նշանակութիւն ունի հենց միանձնյա դիկտատորական իշխանութիւնը տվյալ մոմենտի սպեցիֆիկ խնդիրների տեսակետից, պետք է ասել, վոր յուրաքանչյուր խոշոր մեքենայական ինդուստրիա, այսինքն սոցիալիզմի հենց նյութական, արտադրական աղբյուրն ու հիմքը, այն կամքի անպայման և խստագույն միասնութիւնն է պահանջում, վորն ուղղութիւն է տալիս հարյուրավոր, հազարավոր և տասնյակ հազարավոր մարդկանց միատեղ աշխատանքին: Թե տեխնիկապես թե, տնտեսապես և թե պատմականորեն այդ անհրաժեշտութիւնն ակնհերե է. սոցիալիզմի մասին բոլոր մտածողներն այդ միշտ ընդունել են, վորպես նրա պայմանը: Բայց ինչպես կարող է ապահովվել կամքի խստագույն միասնութիւնը.— հազարավորների կամքը մեկի կամքին յենթարկելով:

Այս յենթարկումը կարող է, ընդհանուր աշխատանքի մասնակիցների իդեալական դիտակցականութեան և կարգապահութեան պայմաններում, ավելի շատ դիրիժորի մեղմ դեկավարութիւնը հիշեցնել: Նա կարող է դիկտատորութեան խիստ ձեւերն ընդունել, — յեթե չկա իդեալական կարգապահութիւն և գիտակցականութիւն: Բայց, այսպես թե այնպես, անառարկելի յենթարկումը միասնական կամքին՝ խոշոր մեքենայական ինդուստրիայի տիպով կազմակերպված աշխատանքի պրոցեսների հաջողութեան համար՝ անպայման անհրաժեշտ է: Յերկաթուղիների համար այն կրկնակի և յեռակի անհրաժեշտ է: Յեւ ահա այդ անցումը քաղաքական մի խնդրից մյուսին, վորն *ursafnus* նրան բոլորովին նման չէ, կազմում է ներկա մոմենտի առանձնահատկութիւնը: Հեղափոխութիւնը նոր է հենց փշրել ամենահին, ամենաամուր, ամենածանր այն շղթաները, վորոնց յենթարկվում էին մասսաները վախի ազդեցութեամբ: Այդ յերեկ էր, իսկ այսօր նույն այդ հեղացիութիւնը, և ¹ հենց հոգուտ սոցիալիզմի, պահանջում է, վոր մասսաներն առանց առարկելու յենթարկվեն աշխատանքային պրոցեսի դեկավարների միասնական կամքին: Հասկանալի յե, վոր այդպիսի անցումը միանգամայն անկարելի յե: Նա կարող է իրագործվել միայն մեծագույն հրնդումների, ցնցումների, հնին վերագառնալու, ժողովրդին դեպի նորը տանող պրոլետարական ավանգարդի եներգիայի վիթխարագույն լարվածութեան գնով: Այդ մասին չեն մտածում նրանք, ովքեր ընկնում են «Новая Жизнь»-ի, «Вперед»-ի, «Дело Народа»-յի և «Наш Век»-ի քաղքենիական հիստերիկայի մեջ ²:

Վերցրեք աշխատավոր և շահագործվող մասսայի միջակ,

¹ Ձեռագրի մեջ զրանից հետո՝ «հենց նրա զարգացման և ամբապընդման շահերի նկատառումով»: Խմբ.:

² «Наш Век» լրագիրը փոխարինեց կադետների կուսակցութեան Կ. Կ.-ի որդան «Речь»-ին, վորը փակված էր 1917 թ. նոյեմբերի 8-ին (հոկտեմբերի 26-ին): Խմբ.:

շարքային ներկայացուցչի հոգեբանությունը, առաջընթաց այս հոգեբանությունը նրա հասարակական կյանքի որոշակի, նյութական պայմանների հետ: Մինչև հոկտեմբերյան հեղափոխությունը նա դեռ չէր տեսել գործնականում, վոր ունևոր, շահագործող դասակարգերն իսկապես վորեւ լուրջ բան նրանց համար զոհաբերելին, նրա ոգտին գիշում անելին: Նա դեռ չէր տեսել, վոր նրան տային բազմիցս խոստացված հողն ու ազատությունը, տային հաշտություն, գիշելին «մեծապետականության» և մեծապետական գաղտնի դաշնագրերի շահերը, գիշելին կապիտալ և շահույթներ: Նա տեսավ այս միայն 1917 թվի նոյեմբերի 7-ից (հոկտեմբերի 25-ից) հետո, յերբ նա ինքը վերցրեց այն ուժով և ուժով ել պիտի պաշտպաներ վերցրածը Կերենսկիներէց, Գոցերէց, Գեգեչկորիներէց, Դուտովներէց, Կարինիովներէց: Հասկանալի յե, վոր վորոշ ժամանակ նրա ամբողջ ուշադրությունը, բոլոր մտքերը, հոգու բոլոր ուժերն ուղղված եյին միայն այն բանին, վոր շուու առնի, ուղղվի, ծավալվի, վերցնի կյանքի մոտակա այն բարիքները, վոր կարելի յե վերցնել և վոր չեյին տալիս նրան տապալված շահագործողները: Հասկանալի յե, վոր վորոշ ժամանակ ե հարկավոր նրա համար, վորպեսզի մասսայի շարքային ներկայացուցիչը վոչ միայն ինքը տեսնի, վոչ միայն համոզվի, այլև զգա, վոր այդպես պարզ կերպով «վերցնել» զրփել, պոկել չի կարելի, վոր այդ տանում ե դեպի քայքայման ուժեղացումը, դեպի կործանումը, դեպի Կարինիովների վերադարձը: Շարքային աշխատավոր մասսայի կյանքի պայմանների մեջ (ապա, հետևապես, նաև հոգեբանության մեջ) համապատասխան բեկումը նոր-նոր ե սկսվում: Յեվ մեր ամբողջ խնդիրը, կոմունիստների (բոլշևիկների) կուսակցության խնդիրը, վորը շահագործողների ազատագրվելու ձգտումների գիտակից արտահայտիչն ե, — այս բեկումը գիտակցելն ե, նրա անհրաժեշտությունը հասկանալն ե, հոգնատանջ և հոգնածությունը յերբ փնտռող մասսայի գլուխ անցնելն ե, նրան ճիշտ ճանա-

պարհով, աշխատանքային կարգապահության ճանապարհով տանելն ե, աշխատանքի պայմանների մասին միախնդներ անելու խնդիրները և աշխատանքի ժամանակ գիկտատորի, խորհրդային դեկավարի կամքին առանց առարկելու յենթարկվելու խնդիրները համաձայնեցնելու ուղիով տանելն ե:

«Միտինգ անելու» վրա ծիծաղում են, իսկ ավելի հաճախ այս առթիվ շարախինդ ֆշշում են բուրժուաները, մենչևիկները, նովոժիզնականները, վորոնք միայն քաոս, խառնաշփոթություն, մանր-սեփականատիրական եգոիզմի պոթկումներ են տեսնում: Սակայն առանց միտինգ անելու՝ ճնշվածների մասսան յերբեք չեր կարող շահագործողների կողմից հարկադրված կարգապահությունից գիտակից և կամավոր կարգապահության անցնել: Միտինգներ անելը, այդ հենց աշխատավորների խալական դեմոկրատիզմն ե, նրանց ուղղվելն ե, նրանց արթնացումն ե նոր կյանքի, նրանց առաջին քայլն ե այն ասպարեցումն, վորը նրանք իրենք մաքրեցին իժերից (շահագործողներից, իմպերիալիստներից, կալվածատերերից, կապիտալիստներից) և վորը նրանք իրենք են ցանկանում կարգավորել սովորել իրենց ձևով, իրենց համար, իրենց «Խորհրդային» և վոչ թե խորթ, վոչ թե աղայական, վոչ թե բուրժուական իշխանության սկզբունքներով: Հարկավոր եր աշխատավորների հենց հոկտեմբերյան հաղթությունը շահագործողների դեմ, հարկավոր եր մի ամբողջ պատմական ժամանակաշրջան, վորի ընթացքում իրենք աշխատավորները նախապես քննարկելին կյանքի նոր պայմանները և նոր խնդիրները, վորպեսզի հնարավոր լիներ հաստատուն անցումն աշխատանքային կարգապահության բարձրագույն ձևերին, պրոլետարիատի գիկտատությունայի անհրաժեշտության գաղափարի գիտակցական յուրացմանը, աշխատանքի ժամանակ Խորհրդային իշխանության ներկայացուցիչների միանձնյա կարգադրություններին առանց առարկելու յենթարկվելուն:

Այս անցումն սկսվել է այժմ:

Մենք հաջողությամբ լուծեցինք հեղափոխության առաջին խնդիրը, մենք տեսանք, թե ինչպես աշխատավորական մասսաներն իրենց մեջ մշակեցին նրա հաջողության հիմնական պայմանը՝ ճիգերի միացումն ընդդեմ շահագործողների՝ նրանց տապալելու համար: Այնպիսի ետապներ, ինչպիսիներն են 1905 թվի հոկտեմբերը, 1917 թվի փետրվարը և հոկտեմբերը, համաշխարհային - պատմական նշանակություն ունեն:

Մենք հաջողությամբ լուծեցինք հեղափոխության յերկրորդ խնդիրը՝ արթնացնել և բարձրացնել հասարակական հենց այն «վարերը», վորոնց շահագործողները վար են հրնդել, և վորոնք միայն 1917 թվի նոյեմբերի 7 - ից (հոկտեմբերի 25 - ից) հետո ստացան նրանց տապալելու, իրենց շուրջը նայելու և իրենց ձեռքով կարգավորվելու ամբողջ ազատությունը: Աշխատավորների հենց առավել ճնշված և ընկճված, նվազ նախապատրաստված մասսայի միտինգ անելը, նրա՝ բոլշևիկների կողմն անցնելը, նրա ամենուրեք իր սեփական խորհրդային կազմակերպությունն իրականացնելը, — ահա հեղափոխության յերկրորդ մեծ ետապը:

Սկսվում է յերրորդը: Պետք է ամրապնդենք այն, ինչ մենք ինքներս ենք նվաճել, ինչ մենք ենք ղեկընտարվորել, որինակա՜նացրել, քննարկել, նշել, — պետք է ամրապնդենք՝ առույտ առաջանալիս կարգապահության հաստատուն ձևերով: Այս ամենն առաջվար, բայց և ամենաշնորհակալ խնդիրն է, վորովհետև միայն նրա լուծումը մեզ սոցիալիստական կարգեր կտա: Պետք է սովորել աշխատավոր մասսաների բուն, զարնանային հորդահոսություն ունեցող, բոլոր ամերից դուրս յեկող միտինգային ղեմոկրատիզմը միացնել յերկաթե կարգապահության հետ աշխատանքի ժամանակ, անառարկելի յենթարկման հետ — մի անձի, խորհրդային ղեկավարի կամքին, աշխատանքի ժամանակ:

Մենք այդ դեռ չենք սովորել:

Մենք այդ կսովորենք:

Բուրժուական շահագործման ռեստավրացիան սպառնում էր մեզ յերեկ հանձին Կարնիլովների, Գոցերի, Դուտովների, Գեգեչկորինների, Բագայեվսկիների: Մենք նրանց հաղթեցինք: Այդ ռեստավրացիան, նույն այդ ռեստավրացիան սպառնում է մեզ այսօր այլ ձևով, մանր-բուրժուական ապերասանություն և անիշխանականության տարերքի ձևով, մանր-սեփականատիրական «ինձ չի վերաբերում»-ով, այդ տարերքի առույտ, մանր, բայց դրա փոխարեն բազմաթիվ հարձակումների և արշավների ձևով ընդդեմ պրոլետարական կարգապահության: Մենք մանր-բուրժուական անարխիայի այս տարերքին պիտի հաղթենք, և մենք նրան կհաղթենք:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Խորհրդային ղեմոկրատիզմի, — այսինքն պրոլետարական, նրա կոնկրետ, տվյալ կերպումամբ, — սոցիալիստական բնույթը նախ և առաջ այն է, վոր ընտրողներն աշխատավոր ու շահագործվող մասսաներն են, բուրժուազիան բացառվում է. յերկրորդ, այն է, վոր ընտրությունների ամեն տեսակի բյուրոկրատական ձևականությունները և սահմանափակումները վերանում են, մասսաներն իրենք են վորոշում ընտրությունների կարգը և ժամկետները, ընտրվածներին հետ կանչելու լիակատար ազատությունը. յերրորդ, այն է, վոր աշխատավորների ավանգարդի, խոշոր արդյունաբերական պրոլետարիատի լավագույն մասսայական կազմակերպություն է ստեղծվում, վոր թույլ է տալիս նրան ղեկավարել շահագործվողների առավելազույն լայն մասսաներին, ներս քաշել նրանց ինքնուրույն քաղաքական կյանքի մեջ, դաստիարակել նրանց քաղաքականապես իրենց սեփական փորձով, վոր այդպիսով առաջին անգամ ձեռնարկվում է այն բանին, վորպեսզի բնակչությունն իսկապես գլխովին սովորի կառավարել և սկսի կառավարել:

Դրանք են Ռուսաստանում գործադրութիւնն ստացած այն դեմոկրատիզմի գլխավոր առանձնահատուկ հատկանիշները, վորը դեմոկրատիզմի ավելի բարձր տիպն է, նրա բուրժուական ազգավազումից խզումն է, սոցիալիստական դեմոկրատիզմին և այն պայմաններին անցնելն է, վորոնք թույլ են տալիս պետութեանը սկսել մահանալ:

Հասկանալի յէ, մանր-բուրժուական կազմալուծութեան տարերքը (վորը յուրաքանչյուր պրոլետարական հեղափոխութեան ժամանակ այս կամ այն չափով անխուսափելիութեն յերևան է գալիս, իսկ մեր հեղափոխութեան մեջ, յերկրի մանր-բուրժուական բնույթի, նրա հետամնացութեան և ռեակցիոն պատերազմի հետևանքով առանձնապէս ուժեղ է յերևան գալիս) չի կարող իր դրոշմը չդնել նաև խորհուրդների վրա:

Խորհուրդների և խորհրդային իշխանութեան զարգացման վրա պիտի անխոնջ աշխատել: Մանր-բուրժուական տենդենց կա խորհուրդների անդամներին «պարլամենտարներ» կամ, մյուս կողմից, բյուրոկրատներ դարձնելու: Դրա դեմ պետք է պայքարել՝ զրավելով խորհուրդների բոլոր անդամներին պրակտիկ մասնակցութեան կառավարման մեջ: Շատ տեղերում խորհուրդների բաժինները դարձվում են որգաններ, վորոնք աստիճանաբար ձուլվում են կոմիտարիատների հետ: Մեր նպատակն է չհաժմութեանը գլխովին զրավել պրակտիկ մասնակցութեան կառավարման մեջ, և դրա իրագործման ուղղութեամբ բոլոր քայլերը, — վորքան ավելի բազմազան լինեն, այնքան ավելի լավ, — պետք է խնամքով զրանցվեն, ուսումնասիրվեն, սխտեմի վերածվեն, ստուգվեն ավելի լայն փորձով, որինականացվեն: Մեր նպատակն է, վոր յուրաքանչյուր աշխատավոր անվնաս կատարի պետական պարտականութիւնները՝ արտադրական աշխատանքի 8-ժամյա «ժամանակամիջոցը» վերջացնելուց հետո: Դրան անցնելն առանձնապէս դժվար է, բայց այս անցման մեջ է միայն սոցիալիզմի վերջնական ամրապնդման յերաշխիքը:

Փոփոխութեան նորութիւնն ու դժվարութիւնը բնականաբար քայլերի առատութիւնն է առաջ բերում, վորոնք արվում են, այսպէս ասած, խարխափելով, սխալների, տատանումների առատութիւն, — առանց դրան վոչ մի խիստ առաջխաղացում չի կարող լինել: Այժմյան դրութեան ամբողջ որիգինալութիւնը, սոցիալիստ համարվել ցանկացողներից շատերի տեսակետով, այն է, վոր մարդիկ վարժվել էյին կապիտալիզմն արատրակա կերպով հակադրել սոցիալիզմին, իսկ սրա և նրա միջև խորիմաստ կերպով դնում էյին «թռիչք» խոսքը (վոմանք, հիշելով Շնգելից կարգացած կտորները, ավելի խորիմաստ կերպով ավելացնում էյին «թռիչք անհրաժեշտութեան թագավորութիւնից ազատութեան թագավորութիւնը»): Այն մասին, վոր սոցիալիզմի ուսուցիչները «թռիչք» էյին անվանում բեկումը՝ համաշխարհային պատմութեան շրջադարձերի տեսանկյունով, և վոր այդ տեսակի թռիչքներն ընդգրկում են 10 և ավելի տարիների ժամանակաշրջաններ, այդ մասին չի կարողանում մտածել այդպէս կոչված սոցիալիստների մեծամասնութիւնը, վորոնք սոցիալիզմի մասին «կարգացել են գրքույկում», բայց յերբեք լրջութեամբ գործի մեջ չեն խորացել: Բնական է, վոր տխրահոչակ «ինտելիգենցիան» այդպիսի ժամանակներում հանգուցյալի վրա անհամար թիվով լալկան կանայք է դնում. մեկը վողբում է Սահմանադիր ժողովը, մյուսը՝ բուրժուական դիսցիպլինան, յերրորդը՝ կապիտալիստական կարգը, չորրորդը՝ կուլտուրական կալվածատիրոջը, հինգերորդը՝ իմպերիալիստական մեծապետականութիւնը և այլն, և այլն:

Մեծ թռիչքների եպոխայի իսկական հետաքրքրութիւնն այն է, վոր հնի բեկորների առատութիւնը, վորոնք յերբեմն ավելի արագ են կուտակվում, քան նորի սաղմերի (վոչ միշտ միանգամից տեսանելի) քանակը, զարգացման գծի կամ շղթայի մեջ ամենաեղանակները գատելու կարողութիւնն է պահանջում: Լինում են պատմական մոմենտներ, յերբ հեղափոխութեան

հաջողության համար ամենից կարևորն է ըստ կարելույն շատ բեկորներ հավաքել, այսինքն՝ ըստ կարելույն շատ հին հիմնարկություններ պայթեցնելու Լինուսն են մոմենտներ, յերբ բավականաչափ է պայթեցված, և հերթական խնդիր է դառնում հողը բեկորներին մաքրելու «պրոդայիկ» (մանր-բուրժուական հեղափոխականի համար՝ «տիւր») աշխատանքը։ Լինուսն են մոմենտներ, յերբ քարի կտորտանքներից դեռ լավ չմաքրված հողի վրա բեկորների տակից աճած նորի սաղմերի հոգատար խնամքն է ամենից կարևորը։

Բաւական չե հեղափոխական և սոցիալիզմի կողմնակից կամ
կոմունիստ լինել ընդհանրապես: Պետք ե յուրաքանչյուր մոմեն-
տում գտնել կարենալ շղթայի այն առանձին ողակը, վորից
պետք ե ամբողջ ուժով բռնել՝ ամբողջ շղթան պահելու և հաս-
տատուն կերպով հետեյալ ողակին անցում նախապատրաստելու
համար, ըստ վորում ողակների կարգը, նրանց ձևը, նրանց կա-
պակցումը, նրանց տարբերութիւն իրարից անցքերի պատմական
շղթայի մեջ այնքան պարզ և այնքան հասարակ չեն, ինչպես
սովորական, դարբնի շինած շղթայի մեջ:

Պայքարը Խորհրդային կազմակերպություն բյուրոկրատիկ ազավազման դեմ ապահովվում է Խորհուրդների ունեցած կապի ամրակուռությունը «Ժողովուրդի» հետ, աշխատավորների և շահագործվողների իմաստով, այս կապի ձևունությունը և առաձգականությունը: Դեմոկրատիզմի տեսակետով աշխարհի մեջ նույնիսկ լավագույն կապիտալիստական հանրապետություն բուրժուական պարլամենտներին չքավորությունը յերբեք «իր» հիմնարկությունը չի համարում: Իսկ Խորհուրդները — բանվորների և գյուղացիների մասսայի համար «իրենն» են և վոչ թե խորթ: Ժամանակակից սոցիալ-դեմոկրատներին, Շալչեևսկի կամ, վոր համարյա նույնն է, Մարտովի յերանգի սոցիալ-դեմոկրատներին, նույնքան զգվեցնում են Խորհուրդները, նրանք նույնքան ձգտում են բարեպառշած բուրժուական պարլամեն-

տին, կամ՝ Սահմանադիր ժողովին, ինչպես Տուրգենևը 60 տարի սրանից առաջ ձգտում էր չափավոր միապետական և ազնվական սահմանադրության, ինչպես նրան զգլեցնում էր Դաբլայուբովի և Ջերնիշևսկու մոլեխիկային դեմոկրատիզմը:

Հատկապես հենց խորհուրդները՝ աշխատավորների «ժողովրդիկ» մոտիկ լինելու հանգամանքը հետ կանչելու և վերահսկողութայն հատուկ այլ ձևեր ե ստեղծում ներքևից, վորոնք այժմ պիտի առանձնապես յեռանդուն կերպով զարգացվեն։ Որինակ, ժողովրդական կրթութայն խորհուրդները վորպես խորհրդային ընտրողների և նրանց պատգամավորների պարբերական կոնֆերենցիաներ՝ խորհրդային իշխանությունների գործունեյությունը քննարկելու և վերահսկելու համար տվյալ բնագավառում, արժանի յեն լրակատար համակրանքի և աջակցութայն։ Ձկա ավելի տխմար բան, քան խորհուրդները մի ինչ-վոր քարոցած և ինքնաբավ հաստատություն դարձնելը։ Վորքան ավելի վճռականորին մենք պետք ե պաշտպանենք այժմ անողոք կայուն իշխանությունը, առանձին անձերի դիկտատուրան աւելասանքի վորու պրոցեսների համար, գուս-գործադիր ֆունկցիաների վորոշ մոմենտներում, այնքան ավելի բաղմազան պիտի լինեն վերահսկողութայն ձևերն ու յեղանակները ներքևից, վորպեսզի խորհրդային իշխանութայն խեղաթյուրման հնարավորութայն ստվերն անգամ վերացվի, վորպեսզի կրկնակի և անխոնջ կերպով պոկոտվի բյուրոկրատիզմի մորախոտը։

ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄՆ

Արտասովոր ծանր, դժվարին և վտանգավոր դրություն միջադգային տեսակետով. անհրաժեշտություն ըստ պայմանների շարժվել և նահանջել. հեղափոխության նոր բանկումները սպասողական ժամանակաշրջան, վոր տանջալից յերկարատևությամբ հասունանում և Արևմուտքում. յերկրի ներսում դանդաղ շինարարության և անողոք «կարգի բերման», պրոլետարական

խիստ կարգապահութեան տեսական և համառ պայքարի շրջան ընդդէմ մանր-բուրժուական ապերասանութեան և անիշխանակա-նութեան սպառնացող տարերքի, — այս են, համառոտակի, սոցիալիստական հեղափոխութեան մեր ապրած հատուկ ժամանա-կաշրջանի բնորոշ գծերը: Այդպէս ե անցքերի պատմական շղթայի այն ողակը, վորից պիտի մենք այժմ ամբողջ ուժով բռնենք, վոր-պէսզի խնդրի բարձրութեան վրա կանգնած լինենք մինչև մյուս ողակին անցնելը, — մի ողակ, վոր դեպի ինքն ե գրավում հատուկ պայծառութեամբ, միջազգային պրոլետարական հեղափոխու-թեան հաղթութեանները պայծառութեամբ:

Փորձեցեք «հեղափոխականի» սովորական, գործածական հասկացողութեան հետ առադրել այն լոգունքները, վորոնք բըղ-խում են ներկա ժամանակաշրջանի առանձնահատկութեանները՝ ըստ պայմանների շարժել, նահանջել, սպասել, դանդաղ կառուցել, անխնա «ծիգ տալ», խտուրթյամբ կարգապահ դարձնել, ջախջախել ապերասանութեանը... Զարմանալի՜ յե արդյոք, վոր վորոշ «հեղա-փոխականներ»: յերբ նրանք լսում են այս ազնիվ գաղափարը ե համակում, և նրանք սկսում են «ջարդուփշուր անել» մեզ՝ հոկտեմբերյան հեղափոխութեան տրագիկանները մոռացութեան տալու համար, համաձայնողականութեան համար բուրժուական մասնաղետների հետ, կոմպրոմիսների համար բուրժուազիայի հետ, մանր-բուրժուականութեան համար, ռեֆորմիզմի համար և այլն, և այլն:

Այս վայ-հեղափոխականների դժբախտութեանն այն ե, վոր նրանցից նույնիսկ աջախիսներին, վորոնք աջխաբհիս մեջ լա-վազույն զըղումներով են ղեկավարվում և աչքի յեն ընկնում իրենց անպայման անձնվիրութեամբ դեպի սոցիալիզմի դործը, նույնիսկ աջախիսներին պակասում ե այն առանձին և «առանձնապէս տհաճ» վիճակի ըմբռնումը, վորի միջով անխուսափելիորեն պիտի անցնեն հետամնաց, ռեակ-ցիոն ու դժբախտ պատերազմից ծվատված այն յերկիրը, վորն

ոկսեց սոցիալիստական հեղափոխութեանը շատ ավելի առաջ, քան առավել առաջավոր յերկրները. — նրանց պակասում ե տոկունութեանը՝ դժվարին անցման դժվարին ըտպեներին: Բնական ե, վոր մեր կուսակցութեանն այդ տեսակի «պաշտո-նական» ոպդիցիա սարքում ե «ձախ ես-երների» կուսակցու-թեանը: Խմբային և դատակարգային տիպերից անձնական բացառութեաններ, իհարկե, կան և միշտ ել կլինեն: Բայց՝ սոցիալական տիպերը մնում են: Մի յերկրում, ուր մանր-սեփականատիրական բնակչութեանը հսկայական չափով գերա-կշռում ե զուտ պրոլետարականից, այդպիսի յերկրում անխու-սափելիորեն յերևան կգա — և ժամանակ առ ժամանակ ծայրա-հեղ խտուրթյամբ յերևան կգա — պրոլետարական և մանր-բուր-ժուական հեղափոխականի միջև գոյութեան ունեցող տարբերու-թեանը: Այս վերջինն որորվում ու տատանվում ե անցքերի յուրաքանչյուր շրջադարձի ժամանակ, անցնում ե կատաղի հեղափոխականութեանը՝ 1917 թ. մարտին «կոալիցիայի» դրվատ-մանք մատչելի, բողոքներին դեմ առնող թեան (կամ նրանց «ար-կածախնդրութեանը» վողբարուն)՝ հուլիսին, յերկշտաբար նրանցից հեռանալուն՝ հոկտեմբերի վերջին, նրանց պատշապանու-թեանը՝ դեկտեմբերին, — վերջապէս 1918 թ. մարտին և ապրիլին այդպիսի տիպերն ամենից հաճախ քիթն արհամարհանքով վեր են քաշում և ասում են. «Յես նրանցից չեմ, ովքեր որհնեղում են «որդանական» աշխատանքը, պրակտիցիզմը և աստիճանակա-նութեանը»:

Այդպիսի տիպերի սոցիալական ազդեցւթը, զա՝ — մանր տըն-տեսատերն ե, վորը մոլեգնել ե պատերազմի սարսափներից, հանկարծակի քայքայումից, սովի և ավերածութեան անլուր տանջանքներից, վորը հիստերիկաբար թպրտում ե, յելք ու վերկու-թեան փնտռելով, տատանվելով մի կողմից՝ պրոլետարիատին տածած վստահութեան ու աջակցութեան, մյուս կողմից՝ հուսա-հատութեան ջղաձգութեաններ միջև: Պետք ե պարզ հասկանալ

և ամուր կերպով յուրացնել, փոր սոցիալական այսպիսի բազայի վրա փոշ մի սոցիալիզմ կառուցել չի կարելի: Աշխատավոր և շահագործվող մասսաներին կարող ե գեկավարել միայն այն դասակարգը, փորն առանց տատանումների գնում ե իր ուղիով, չի կորցնում հոգու արիությունը և հուսահատություն մեջ չի ընկնում ամենազգվարին, ծանր ու վտանգավոր անցումների ժամանակ: Մեզ հիստերիկ բռնկումներ պետք չեն:

Մեզ հարկավոր ե պրոլետարիատի յերկաթե գումարտակների համաչափ յերթը:

Գրված ե 1918 թ. մարտ — ապրիլին:
Տպագրված ե 1918 թ. ապրիլի 28-ին
„Известия В. Ц. И. К.“-ի № 85-ում:
Ստորագրություն՝ Ն. Լենին:

Տպագրված ե Յերկերի ուսու. 2-րդ և
3-րդ հրատ. տեքստից. հ. XXII,
հջ 435—468:

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹՅՈՒՆ

	62
Ռուսաստանի խորհրդային հանրապետության միջազգային դրու- թյունը և սոցիալիստական հեղափոխություն հիմնական խնդիրները	3
Մոմենտի ընդհանուր լոգունը	8
Կովի նոր ֆազը բուրժուազիայի դեմ	10
Պայքարի նշանակությունը համաժողովրդական հաշվառման և վերահսկողության համար	23
Աշխատանքի արտադրողականության բարձրացումը	28
Մրցակցության կազմակերպումը	32
«Ներդաշնակ կազմակերպությունը» և դիկտատուրան	37
Խորհրդային կազմակերպության զարգացումը	51
Ֆեզրափակում	55



Սրբազնի Ա. Տ. Միսեյան
Հանձնված է արտադրության 27 սեպտեմբերի 1933 թ.
Ստորագրված է տպագրելու 3 հոկտեմբերի 1933 թ.
Գլավիլիս № 7773 (բ). Հրատ. № 196.
Պատվեր № 46. Տիրում 5000.

Կուսիբեյի տպարան. Յերեվան. 117,000 տպ. 69.

ՀՀ Ազգային գրադարան



NL0178882

ՀԻՆՆ Ե 40 ԿՈՂ.

В. И. ЛЕНИН

Очередные задачи
Советской власти.

Партиздат, 1933. Эривань